

ՄԱՍ3. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Բնակչության կենսամակարդակը նախքան տնտեսական բարեփոխումները

1.1 Խորհրդային ժամանակաշրջանի Հայաստանի բնակչության ընդհանուր կենսամակարդակն առանձնապես բարձր չէր: Բնակչության նյութական բարեկեցությունը գնահատվում էր սննդամթերքի հիմնական տեսակների սպառմամբ (ըստ գիտականորեն հիմնավորված ռացիոնալ նորմաների), ոչ պարենային ապրանքների սպառմամբ, երկարաժամկետ օգտագործման ապրանքներով բնակչության ապահովվածությամբ, բնակչության եկամուտների և ծախսերի կառուցվածքով:

Բնակչության բաշխումն ըստ մեկ շնչին ընկնող միջին համախառն եկամտի 1988թ-ին, Միութենական Հանրապետությունների կտրվածքով, բերված է հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 15. Բնակչության բաշխումն ըստ մեկ շնչին ընկնող միջին համախառն եկամտի 1988թ-ին, Միութենական Հանրապետությունների կտրվածքով

	Ընդամենը բնակչություն, մլն մարդ	Այդ թվում (%-ներով) մեկ շնչին ընկնող միջին ամսական համախառն եկամուտով, ռուբլի				
		մինչև 75	75-100	100-150	150-200	ավելի քան 200
ՍՍՀՄ	285.5	12.6	15.7	33.3	21.2	17.2
ՌՍՖՍՀ	146.8	6.3	13.1	34.0	24.6	22.0
ՌԲկրաիական ՍՍՀ	51.3	8.1	16.8	38.5	22.4	14.2
Բելոռուսական ՍՍՀ	10.2	5.0	12.9	36.8	25.8	19.2
ՌԻգբեկական ՍՍՀ	19.8	44.7	23.9	22.2	6.4	2.8
Ղասախական ՍՍՀ	16.6	15.9	19.3	33.7	18.1	13.0
Վրացական ՍՍՀ	5.3	16.3	17.4	31.6	18.1	16.6
Ադրբեջանական ՍՍՀ	7.0	33.3	22.2	27.3	10.9	6.3
Լիտվական ՍՍՀ	3.7	3.6	10.7	34.6	27.1	24.0
Մոլդովական ՍՍՀ	4.2	13.0	19.8	37.3	18.9	11.0
Լատվիական ՍՍՀ	2.7	3.2	9.5	31.8	27.2	28.3
Կիրգիզական ՍՍՀ	4.3	37.1	23.1	26.0	9.2	4.6
Տաջիկական ՍՍՀ	5.0	58.6	20.7	15.5	3.8	1.4
Հայկական ՍՍՀ	3.5	18.1	21.5	34.7	16.2	9.5
Թուրքմենական ՍՍՀ	3.5	36.6	23.0	25.8	9.4	5.2
Էստոնական ՍՍՀ	1.6	3.9	9.0	28.0	25.5	33.6

Վիճակագրության ծառայությունների կողմից կատարված բյուջետային հետազոտությունները ցույց են տալիս, որ մեր հանրապետության յուրաքանչյուր հինգերորդ բնակչի եկամուտը 1988-ին ցածր էր կենսաապահովման նվազագույնից, որը ըստ ԽՍՀՄ աշխատանքի և վիճակագրության պետական կոմիտեների հաշվարկների, ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար 1988թ. կազմում էր ամսական 78 ռուբլի (կամ, պաշտոնական փոխարժեքով հաշվարկված՝ \$87): Խորհրդային Միությունում միջին հաշվով յուրաքանչյուր 8-րդ բնակիչն ուներ կենսաապահովման նվազագույնից ցածր եկամուտ:

1.2 Տնտեսական բարեփոխումներին նախորդած ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական զարգացման տեսակետից ամենաբարենպաստը 1985թ. էր: Այդ տարվա տվյալներով հանրապետության բնակիչների եկամտի հիմնական աղբյուրն աշխատավարձն էր, որի բաժինը եկամուտների կազմում հասնում էր 76%-ի:

Կենսաթոշակների, նպաստների և կրթաթոշակների բաժինը 11% էր, գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացված եկամուտի և այլ եկամուտների տեսակարար կշիռը՝ 13%:

Մանրամթերքի գնման ծախսերն ընտանիքի ծախսերի կառուցվածքում կազմում էին 41%, արդյունաբերական ապրանքների՝ 28%, ծառայությունների՝ 8%, ընդ որում, կարելի է ենթադրել, որ ավելի ցածր եկամուտ ունեցող խավերի ծախսերը սննդամթերքի վրա զգալիորեն բարձր էին հանրապետության միջինից (41%):

Ինչ վերաբերվում է սննդամթերքի հիմնական տեսակների փաստացի սպառմանը, ապա այն բավական բարձր էր:

Մանրամթերքի սպառման օրական էներգետիկան հասնում է 2546 կիլոկալորիայի (կկալ)՝ չհամապատասխանելով սակայն ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի ինստիտուտի կողմից սահմանած ռացիոնալ նորմաներին (օրական 2710 կկալ): Բացի այդ, սննդամթերքի հիմնական տեսակների սպառման ծավալները նույնպես շեղվում էին սպառման ռացիոնալ նորմաներից: Օրինակ, Հայաստանի բնակչությանը բնորոշ էր հացամթերքի և կաթնամթերքի սպառման ռացիոնալ նորմաները գերազանցող սպառումը (համապատասխանաբար 12%-ով և 15%-ով): Մնացած բոլոր հիմնական սննդատեսակների սպառումը ռացիոնալ նորմաներից ցածր էր. մսամթերքին՝ 35.8%-ով, ձկնեղենին՝ 52.9%-ով, բուսական յուղին՝ 84.8%-ով, մրգին՝ 26.4%-ով և այլն:

1.3 Անցման ժամանակաշրջանում բնակչության կենսամակարդակի որոշ ցուցանիշները՝ ըստ ընտանեկան բյուջեների հետազոտությունների:

Հաջորդ տարիներին հանրապետության տրանսպորտային ուղիների զագատարների շրջափակմամբ, էներգետիկ ճգնաժամով, միջնուղային և միջնեզիոնալ կապերի խզմամբ, հին տնտեսական մեխանիզմի փլուզմամբ հանրապետության տարածքի 40%-ից և բնակչության 1/3-ից ավելին ընդգրկող ավերիչ երկրաշարժով ու փախստականների մեծ ներհոսքով (1988-1992թթ.Հայաստան է տեղափոխվել մոտ 350 հազար փախստական) պայմանավորված տնտեսական անկումն առաջ բերեց բնակչության կենսամակարդակի կտրուկ անկում: Բնակչության եկամուտների կառուցվածքում տեղի ունեցան էական տեղաշարժեր: Եկամուտների կառուցվածքում տարեցտարի նվազեց աշխատավարձի բաժինը՝ 1991թ. 55%-ից մինչև 25%՝ 1994թ-ին: Եկամուտների մեջ աշխատավարձի

Ներդիր 5. Ընտանեկան բյուջեների հետազոտությունները

Նախկին Խորհրդային Հայաստանում երկար տարիների ընթացքում (50-ական թվականներից ի վեր) բնակչության կենսամակարդակի ուսումնասիրության նպատակով անց էին կացվում ընտանեկան բյուջեների հետազոտություններ:

Հետազոտությունը կազմակերպում էր ճյուղային-տարածքային ընտրանքի մեթոդով: Հայաստանը դիտվում էր որպես ԽՍՀՄ-ի տարածքի մի մաս, իսկ ընտանիքների ընտրությունը կատարվում էր երկու փուլով՝ սկզբում ընտրվում էին ձեռնարկությունները (այդ թվում նաև գյուղատնտեսական կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները), որից հետո դրանցում ընտրվում էին աշխատողները, որոնց ընտանիքներում իրականացվում էին բյուջեների հետազոտությունները:

Բյուջետային հետազոտությունների մշտական ցանցն ընդգրկում էր մոտ 1000 ընտանիք: Գյուղային ընտրության մեթոդը և ընտանիքների մշտական ցանցը ունեին որոշակի թերություններ.

- ճյուղային ընտրության դեպքում ընտրանքային համախմբության մեջ չէին ընկնում մի շարք նախարարություններ, գործաժամակորներ, ինչպես նաև, վերջին տարիներին խորհրդային տնտեսությանն արդեն բնորոշ դարձած մասնավոր ձեռնարկությունները,

- ընտանիքների մշտական ցանցը չէր կարող ըստ պատշաճի ներկայացուցչական լինել, քանի որ տարիներշարունակ դիտարկվող ընտանիքներն իրենց եկամուտների և ծախսերի կանոնավոր գրանցումների շնորհիվ աստիճանաբար վերածվում էին ավելի «կազմակերպված» տնային տնտեսությունների և որոշ չափով կորցնում իրենց ներկայացուցչական բնույթը:

Հոգեբանական առումով մշտական դիտարկումների համակարգը հետազոտվող ընտանիքների համար դառնում էր «ժանր բեռ»: Բնակչությունը տհաճությամբ էր վարում իր եկամուտների և ծախսերի գրառումները երկար ժամանակահատվածում: Բնականաբար, այս հանգամանքն ազդում էր գրառումների որակի վրա, հաշվի չառած դեռ այն հանգամանքը, որ տարիների ընթացքում մշտական ցանցի պահպանումը մեծ ջանքեր էր պահանջում ընտրված ընտանիքների բարոյական և նյութական խրախուսման համար,

- յուրաքանչյուր հետազոտվող ընտանիքի տվյալների ստուգման և վերահսկման համար կիրառվում էր հաշվեկշռային մեթոդը, որի հետևանքով աղավաղվում էր տեղեկատվության նախնական բազան:

տեսակարար կշռի նվազմանը զուգընթաց աճում էր այլ եկամուտների մասնաբաժինը՝ 1991թ. 15%-ից մինչև 56%՝ 1994թ-ին:

Ծախսերի կառուցվածքում մշտապես աճում էր սննդամթերքի գնման ծախսերի բաժինը՝ 1991թ. 54%-ից մինչև 65%՝ 1994թ-ին: Արդյունաբերական ապրանքների գնման ծախսերի բաժինը նույն ժամանակահատվածում նվազեց 27%-ից մինչև 21%: Նշված տարիներին նվազման միտում ունեին նաև ծառայությունների գծով կատարվող ծախսերը, քանի որ բնակչությունը դարձել էր անվճարունակ և ստիպված էր հրաժարվել կենցաղային ծառայությունների շատ տեսակներից, մշակույթի ծառայություններից և անկարող էր վճարել բնակարանային-կոմունալ ծառայությունների դիմաց: Աճում էր միայն տրասպորտային ծառայությունների վրա կատարվող ծախսերի մասնաբաժինը, քանի որ դրանցից հնարավոր չէր խուսափել:

Ստորև բերված ընտանեկան բյուջեների հետազոտությունների տվյալները՝ բնակչության եկամուտների ու ծախսերի կառուցվածքի վերաբերյալ:

Աղյուսակ 16. Բնակչության եկամուտների ու ծախսերի կառուցվածքը (%)

	1991	1992	1993	1994	1995
Դրամական եկամուտներ	100	100	100	100	100
այդ թվում					
աշխատավարձ	55.1	49.7	31.8	24.5	31.9
կենսաթոշակներ, կրթաթոշակներ, նպաստներ	17.8	12.5	7.7	5.5	10.2
գ/տ արտադրանքի, անասունների, թռչունների վաճառքից	12.4	10.9	9.4	13.6	9.1
այլ եկամուտներ	14.7	26.9	51.1	56.4	48.8
Դրամական ծախսեր	100	100	100	100	100
այդ թվում					
սննդամթերքի վրա	53.8	67.9	70.0	64.7	65.9
ըչ պարենային ապրանքների վրա	26.8	18.2	18.1	21.0	17.9
ծառայությունների վրա	5.9	4.5	3.9	6.0	7.6
այդ թվում					
տրանսպորտ	2.0	2.5	2.4	3.0	3.0
բնակարանային-կոմունալ ծառ-եր	1.6	0.9	0.7	0.9	3.1
մշակույթի ծառ-եր	0.2	0.2	0.1	0.1	0.1
այլ	2.1	0.9	0.7	2.0	1.4
ալկոհոլային խմիչքների գնման վրա	2.5	2.6	3.2	2.1	1.5
հարկեր	4.3	3.8	2.5	3.5	3.9
այլ ծախսեր	6.7	3.0	2.3	2.7	3.2

Եթե 1985թ-ին, սննդամթերքի հիմնական տեսակների համեմատաբար բարձր սպառման մակարդակի պայմաններում, նկատվում էին շեղումներ սպառման ռացիոնալ նորմաներից, ապա անցումային ժամանակաշրջանում սննդամթերքի հիմնական տեսակների սպառումը կտրուկ կրճատվեց, էլ ավելի խստացավ սպառման անհաշվեկշռվածությունը: Այսպես, 1994թ. մասնաբաժնի սպառումը 15 անգամ ցածր էր սահմանված ռացիոնալ նորմայից, կաթնամթերքինը՝ 2.1 անգամ, մրգինը՝ 3.1 անգամ, ձկնեղենինը՝ 3.7 անգամ, ձվինը՝ 5.5 անգամ, բանջար-բոստանային կուլտուրաներինը՝ 1.9 անգամ: 1991թ. օրական սպառվող սննդամթերքի էներգետիկական կազմում էր 2181 կկալ, իսկ 1994-ին՝ արդեն 1599 կկալ:

Աղյուսակ 17. Սննդամթերքի հիմնական տեսակների սպառումն ըստ ընանիքների բյուջետային հետազոտությունների տվյալների (մեկ շնչի հաշվով, մեկ ամսում, կգ)

	1991	1992	1993	1994	1995
Հացամթերք	12.2	13.0	11.0	10.8	10.9
Կաթ, մածուկ	4.8	2.2	1.5	1.4	1.5
Կենդանական յուղ	0.6	0.5	0.5	0.5	0.4
Պանիր	0.5	0.4	0.3	0.3	0.3
Մսամթերք	1.9	1.2	0.5	0.4	0.5
Բանջարա-բոստանային կուլտուրաներ	8.9	7.0	5.6	6.1	6.4
Կարտոֆիլ	4.6	4.4	4.3	4.2	4.3
Միրգ	4.8	3.3	2.2	2.3	2.7
Շաքար	0.9	0.6	0.5	0.5	0.5
Չու(հատ)	12.0	8.0	5.9	3.2	3.5
Չկնամթերք	0.6	0.5	0.3	0.2	0.2
Բուսական յուղ	0.2	0.2	0.2	0.1	0.2

Այսպիսով, ակնհայտ է, որ անցման ժամանակաշրջանում սոցիալ-տնտեսական կյանքը հանրապետությունում գնալով վտարանում էր, բնակչության կենսամակարդակը շեշտակիորեն ընկնում, իսկ աղքատության հիմնախնդիրը ձևավորվում էր որպես ամենահրատապներից մեկը՝ թե՛ հետազոտողների, և թե՛ քաղաքական գործիչների համար:

2. Կենսամակարդակի ուսումնասիրությունները պլանային տնտեսությունից ազատական տնտեսակարգին անցման ժամանակաշրջանում

2.1 Հայաստանում կենսամակարդակի ուսումնասիրությունը անցումային ժամանակաշրջանում ոչ մի կերպ չէր կարող իրականացվել նախկին, հին մեթոդաբանության հիման վրա: Անհրաժեշտ էին կենսամակարդակի ուսումնասիրության նոր, միջազգային ստանդարտներին համահունչ մեխանիզմներ և մեթոդներ, որոնք կառանձնացնեին աղքատությունը՝ որպես իր չափումն ու բազմազործոն վերլուծությունը պահանջող սոցիալական հիմնահարց:

Ընդունելով հետազոտության հին մեթոդի թերությունները և նոր մոտեցումների ներդրման անհրաժեշտությունը՝ ՀՀ Վիճվարչությունը Երևանի Պետական Համալսարանի մասնագետների հետ նախաձեռնեց ու 1993թ. վերջին երկու և 1994թ. առաջին երկու եռամսյակների ընթացքում անցկացրեց տնային տնտեսությունների փորձնական հետազոտություն:

Հետազոտության հիմքում ընկած էր պահային դիտարկումների մեթոդը: Հարցման էին ենթարկվել պատահականորեն ընտրված 3300 ընտանիքներ, որոնցից 2100-ը՝ քաղաքային և 1200-ը գյուղական բնակավայրերից: Ստացված տվյալները մշակվեցին Համաշխարհային Բանկում և արդյունքները հրատարակվեցին #15693-AM “Armenia. Confronting Poverty Issues” (June 10, 1996) հաշվետվության տեսքով:

2.2 Աղքատության հիմնահարցի սրմանը զուգընթաց կարևորվում էր այդ երևույթի բազմակողմանի և հաստատուն պարբերականությամբ ուսումնասիրման խնդիրը: Սակայն, նման հետազոտությունների բարձր ծախսատարությունն ու ՀՀ պետական բյուջեի լուրջ սահմանափակումներն ի չիք էին դարձնում այդ ուղղությամբ ՀՀ Վիճվարչության նախաձեռնությունները:

Պատահական չէր, որ կենսամակարդակի և աղքատության ուսումնասիրության հաջորդ փորձը ձեռնարկեց տնտեսական քաղաքականության և վերլուծության

Ներդիր 6. Հայաստանում աղքատության գնահատման նպատակով 1993-1994 թվականներին իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները:

Աղքատության գնահատման համար ընդունվել էր, որ շատ աղքատ են այն տնային տնտեսությունները, որոնց մեկ շնչին ընկնող միջին ծախսերը ցածր են ծախսերի մեդիանի 15%-ից, աղքատ են այն տնային տնտեսությունները, որոնց մեկ շնչին ընկնող միջին ծախսերը ընկած են ծախսերի մեդիանի 15%-ից մինչև 40% միջակայքում:

Ուսումնասիրվող տարիներին աղքատությունը քաղաքային բնակավայրերում ավելի տարածված երևույթ էր: Քաղաքային և գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակն արտացոլող տվյալները բերվում են ստորև.

	տոկոսներով	
	Քաղաք	Գյուղ
Ծայրահեղ աղքատներ	20	12
Աղքատներ	11	13
Ընդամենը	31	25

Հետազոտությունը բացահայտեց անկայուն կապեր աղքատության և տարիքի, սեռի, գործազրկության, ընտանիքի չափի, կամ սպառողական սպրանքների պաշարների միջև: Աղքատությանը նպաստող գործոններն էին՝ դրսից ընտանիքին հատկացվող նյութական օգնության, մասնավոր փոխանցումների և տնտեսության ոչ ֆորմալ հատվածում աշխատանքի դիմաց վարձատրության բացակայությունը:

Աղբյուր՝ “Armenia. Confronting Poverty Issues”, WB reports, 1996

հետազոտական կենտրոնը (SEPRE), որը ֆինանսավորվում էր ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից: 1995թ. սեպտեմբերից կենտրոնը սկսեց Երևանում ապրող ընտանիքների բյուջեների հետազոտություն:

Պատահականորեն ընտրված 1500 ընտանիքներից, ըստ որոշակի հայտանիշների, նախընտրվեցին 200-ը, որոնք և հետազոտվեցին մեկ տարվա (1995-ի սեպտեմբերից մինչև 1996-ի օգոստոսը) ընթացքում:

Հետազոտության հիմնական նպատակը բնակչության եկամուտների և սպառողական ծախսերի կառուցվածքի բացահայտումն ու վերլուծությունն էր, ինչպես նաև, ըստ եկամտային խմբերի ընտանիքների քվանթիլային բաշխումը :

Արդյունքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նշված ժամանակահատվածում Երևանում բնակվող ընտանիքի միջին ծախսերը մեկ շնչի հաշվով կազմել են \$60.4, այդ թվում ընթացիկ ծախսերը՝ \$50.3: Ընդ որում միջին ծախսերը գերազանցում էին միջին եկամուտները \$10.7-ով: Ծախսերի ընդհանուր կառուցվածքում սննդամթերքի վրա կատարված ծախսերի բաժինը կազմել էր 42.1 %, արդյունաբերական ապրանքների՝ 24.8 %, ծառայությունների՝ 33.1 % (Տես՝ Ներդիր 7):

2.3 Աղքատների բացահայտման խրնդիրներով զբաղվում էր նաև “Փարոս” ծրագիրը: 1993 թվականին, երբ հանրապետությունում ստեղծվեց սոցիալական ծառայությունների համակարգը, վերջինների առջև ծառայավ բավական բարդ խնդիր՝ հայտնաբերել և աջակցել սոցիալապես անապահով, անպաշտպան և կարիքավոր ընտանիքներին:

Աղքատության և կարիքավորության վերաբերյալ վիճակագրության իսպառ բացակայության պայմաններում որոշվեց սկզբնական շրջանում՝ որպես կարիքավորության միակ չափանիշ ընդունել անհատի կամ ընտանիքի որևէ սոցիալական խմբին պատկանելը: Այդ շրջանում ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կողմից հաստատվեց 11 (տասնմեկ) սոցիալական խմբերի ցանկը,

Ներդիր 7. Երևան քաղաքի ընտանիքների հետազոտության որոշ արդյունքներ:

Տնտեսական Քաղաքականության Հետազոտման և Վերլուծության Կենտրոնը (SEPPA) 1995թ. սեպտեմբեր - 1996թ. օգոստոս ամիսներին անցկացրեց երևանաբնակ ընտանիքների մոնիտորինգ (կանոնավոր դիտարկումներ):

Կատարվել է յուրատիպ ընտրանք երեք փուլով: Պատահական սկզբունքով ընտրվել են հարցազրուցավարները, որոնք իրենց հերթին վստահելիության սկզբունքով ընտրել են 1500 ընտանիքներ: Վերջինները հետազոտվել են նախնական հարցաթերթիկով՝ հարցման մեթոդով: Ամփոփված 21 ցուցանիշների կտրվածքով (ընտանիքի կազմ, կրթություն, մասնագիտություն, ըստ ոլորտների զբաղվածություն, եկամուտներ, ունեցվածք և այլն) վերլուծության հիման վրա վերոհիշյալ 1500 ընտանիքների համախմբից ամենամյա դիտարկումների համար ընտրվել են 200 էտալոնային ընտանիքներ, որոնք առավել չափով ներկայացնում էին գլխավոր համախմբությունը:

Հետազոտության հիմնական եզրակացությունները հետևյալն էին.

- Երևան քաղաքում պետական հատվածից ստացված աշխատավարձը կազմել է ընդհանուր եկամուտների 16%, մասնավոր հատվածից՝ 36%, ձեռնարկատիրական գործունեությունից և սեփականության դիմաց ստացվածը՝ ավելի քան 40%, սոցիալական տրանսֆերտները՝ 3.3%, իսկ մասնավոր տրանսֆերտները՝ 15.2%: Ընդհանուր առմամբ մասնավոր հատվածից ստացված եկամուտները կազմել են շուրջ 63%, իսկ պետականից՝ 23.5%,
- բնակչության դրամական ծախսերը ծածկվում են ոչ միայն աշխատավարձով, սոցիալական տրանսֆերտներով, ձեռներեցությունից ու սեփականությունից ստացված եկամուտներով, այլ նաև մասնավոր տրանսֆերտների, մարդասիրական օգնության, ունեցվածքի օտարումից (գույքի վաճառք) և փոխառության ճանապարհով (պարտք) առաջացած դրամական միջոցներով: Ուսումնասիրված ժամանակաշրջանում գույքի վաճառքից և պարտքից առաջացած դրամական միջոցները կազմել են միջին ամսական եկամուտների մոտ մեկ քառորդը,
- պարենային ծախսերը կազմել են 42%, ոչ պարենային ապրանքների ձեռք բերման վրա կատարված ծախսերը՝ 25%, իսկ ծառայությունների՝ 33%,
- Երևանում դիտվել է եկամուտների բևեռացման միտում, Ջինի գործակիցը 11 ամիսների համար կազմել է 0.57, 20% ամենաապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը 20% անապահով բնակչության եկամուտներին կազմել է 20 անգամ, իսկ 10% առավել ապահով շերտը տնօրինել է եկամուտների 45%:

Աղբյուր՝ “Երևան քաղաքի ընտանիքների եկամուտների և ծախսերի հետազոտման արդյունքներ”, SEPPA, Երևան, 1996

իսկ սոցիալական ծառայությունների կողմից հաշվառվեցին այդ խմբերին պատկանող շուրջ 500 հազար ընտանիքներ:

Հաշվառված կարիքավորների ցուցակները մոտ մեկուկես տարի հիմք էին ծառայում մարդասիրական օգնության բաշխման համար: Եթե կենսամակարդակի կտրուկ անկման տարիների համար նման մոտեցումն իրեն արդարացնում էր՝ կապված բնակչության զանգվածային աղքատացման հետ, ապա հետագայում, երբ տնտեսության փոքր-ինչ աշխուժացումն անհավասարաչափ ազդեց բնակչության տարբեր խավերի նյութական պայմանների վրա, պարզ դարձավ սոցիալական խումբ՝ հասկացության ավելի ու ավելի հեռացումը «աղքատություն և կարիքավորություն» հասկացություններից:

Ներդիր 8. Տեղեկատվություն «Փարոս» ծրագրի մասին:

«Փարոս» համակարգի ներդրման աշխատանքների իրականացումը սկսվել է 1994 թվականի օգոստոս ամսին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի, սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների աշխատակիցների ուժերով՝ ԱՄՆ Միջազգային Չարագման Գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ արևելյան թեմի Հայ Օգնության Ֆոնդի միջնորդությամբ: Ներդրման աշխատանքներն ավարտվեցին 1995 թվականի մարտին:

«Փարոս» համակարգում կարող էր հաշվառվել իրեն կարիքավոր համարող յուրաքանչյուր ընտանիք: Այսպիսով, այս համակարգով տրամադրվող օգնության ծրագրերում ընդգրկվելու համար «Փարոս»-ում հաշվառվելը պարտադիր, բայց ոչ բավարար պայման էր:

Համակարգի ներդրման փուլում հաշվառման նպատակով դիմել էին 540 հազար ընտանիքներ :

Հանրապետությունում այս համակարգը մարդասիրական օգնությունների բաշխման ծրագրերում կիրառելու մեկ և կես տարվա ընթացքում ընտանիքների թիվը հասավ մինչև 740 հազարի:

«Փարոս» համակարգում սահմանված էին 18 սոցիալական խմբեր, բնակարանային պայմանների 5 և բնակության վայրի 3 գործակիցներ, ինչպես նաև ընտանիքի մեծության գործակից, կախված ընտանիքում անաշխատունակ անդամների թվից, և եկամտի գործակից, որը կարող էր ընտանիքի կարիքավորության աստիճանը փոփոխել 20 % աճից մինչև «0» աստիճանի նվազեցումը:

Ընտանիքների կարիքավորության աստիճանը արտահայտվում է միավորի 1/100 -ի ճշգրտությամբ: Վերոհիշյալ ամբողջ տեղեկատվությունը յուրաքանչյուր ընտանիքի համար հաշվառված է ընդհանուր հանրապետական համակարգային ցանցում:

Մարդասիրական օգնության բաշխման առաջին ծրագիրն իրականացվել է 1995 թվականին՝ «Չմեռ 95-96» նավթի կտրոնների բաշխման տեսքով: 1997թ. արդյունքներով «Փարոս» համակարգով իրականացվել են 31 ծրագրեր, տրամադրվել է շուրջ 2.7 մլն. բաժին օգնություն:

Աղբյուր՝ ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն

Ուստի, անհրաժեշտ էին ընտանիքի կարիքավորության աստիճանը գնահատելու նոր չափանիշներ , որոնք կլինեին առավելագույնս համալիր և լիարժեք: Նման սոցիալական պահանջի արդյունքն էր՝ «Փարոս» համակարգի ստեղծումը: «Փարոս»-ում ընտանիքների կարիքավորության աստիճանն արդեն գնահատվում էր՝ ելնելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական կարգավիճակից, ընտանիքի անդամների քանակից, բնակարանային և բնակավայրային պայմաններից, ինչպես նաև եկամուտներից:

«Փարոս» համակարգի վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը տրված է Ներդիր 8-ում:

3. Աղքատության չափումն ըստ տնային տնտեսությունների 1996 թվականի հետազոտության արդյունքների

3.1 Աղքատության մակարդակի այս բաժնում բերվող գնահատականը հիմնված է 1996-ի նոյեմբեր-դեկտեմբերին ՀՀ Վիճվարչության կողմից անցկացրած տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների վրա (հետազոտության մասին ավելի մանրամասն շարադրված է սույն զեկույցի երկրորդ բաժնում): Աղքատության գնահատման և վերլուծության համար սահմանվեց հետևյալ ձևակերպումը՝ «Աղքատությունը որոշակի կենսական նվազագույնի ապահովման անկարողությունն է»:

Հանրապետությունում չկար կառավարության կողմից սահմանված պաշտոնական աղքատության գիծ: Համաշխարհային բանկի մասնագետների աջակցությամբ որոշվեցին բնակչության փաստացի աղքատության գնահատման ուղիներն ու կատարվեցին՝

- ա) աղքատության հարաբերական գծի
- բ) աղքատության բացարձակ գծի
- գ) սուբյեկտիվ գնահատականների

որոշման համապատասխան հաշվարկներ:

3.2 Քանի որ աղքատության մակարդակի վերլուծության նպատակը բնակչության փաստացի սպառման որոշումն էր, ապա հաշվարկների հիմք ընդունվեցին տնային տնտեսությունների ծախսերը և սննդամթերքի սպառման ծավալները:

Ծախսերը դիտարկված են երկու՝ ընթացիկ և համախառն ծախսերի կտրվածքով: Ընթացիկ ծախսերը ներառել են սննդի, ապրանքների (բացառելով երկարաժամկետ օգտագործման ապրանքները, ինչպես նաև բիզնեսի և գյուղատնտեսական արտադրության վարման հետ կապված ծախսերը) և ծառայությունների, սեփական արտադրության մթերքի սպառման ծախսերը, ինչպես նաև հարազատներից, մարդասիրական և բարեգործական կազմակերպությունների կողմից ստացած բնամթերային օգնությունը: Համախառն ծախսերն ընդգրկել են նաև բիզնեսի և գյուղատնտեսական արտադրության վարման հետ կապված ծախսերը, ինչպես նաև երկարաժամկետ օգտագործման ապրանքների ձեռքբերման ծախսերը:

Այնուհետև, աղքատության գնահատականներում ընտրանքային համախմբությունից բացառվեցին ընտանիքի բացակա անդամները, քանի որ սպառման վրա հիմնված ցուցանիշը պետք է համեմատելի լիներ սպառողների փաստացի թվի հետ: Այդ իսկ պատճառով ի տարբերություն տնային տնտեսությունների ընդհանուր վերլուծությանը, որտեղ ուսումնասիրված համակցությունը կազմում էր 20088 մարդ, աղքատության վերլուծության ընթացքում օգտագործվել է ընտանիքների առկա անդամների թիվը՝ 19407 մարդ:

Այս մեթոդական հիմունքներով հաշվարկված մեկ շնչին ընկնող միջին ընթացիկ ծախսերը կազմեցին 14 542 դրամ: Եթե հարաբերական աղքատության գիծն ընդունենք որպես մեկ շնչին ընկնող միջին ընթացիկ ծախսերի 2/3 -ը, ապա այն հավասար կլինի 9 694 դրամի, եթե ընդունենք այն որպես մեկ շնչին ընկնող միջին ընթացիկ ծախսերի 1/3 -ը, համապատասխանաբար, 4 847 դրամի:

Կայուն տնտեսություն ունեցող երկրներում ընդունված է հարաբերական աղքատության գիծը հաշվարկել՝ որպես մեկ շնչին ընկնող միջին ընթացիկ ծախսերի մեդիանի 40% -ը: Այդ դեպքում մեր երկրում աղքատության գիծը հավասար կլինի 3960 դրամի: Այդուսակ 18 -ում բերված են վերը նկարագրված երեք չափանիշներով կատարված աղքատության հաշվարկները:

**Աղյուսակ 18. Աղքատության գնահատականն ըստ տարբեր մոտեցումների
Աղքատության գիծը. մեկ շնչին ընկնող միջին ընթացիկ ծախսերի 2/3 -ը**

	Տնային տնտեսություններ		Բնակչություն	
	Թվաքանակը	%	Թվաքանակը	%
Ոչ աղքատներ	2752	55.93	9934	51.19
Աղքատներ	2168	44.07	9473	48.81
Ընդամենը	4920	100.00	19407 *	100.00

* Հարցված տնային տնտեսություններում առկա բնակչության թիվը

Աղքատության գիծը. մեկ շնչին ընկնող միջին ընթացիկ ծախսերի 1/3 -ը

	Տնային տնտեսություններ		Բնակչություն	
	Թվաքանակը	%	Թվաքանակը	%
Ոչ աղքատներ	4326	87.93	16665	85.87
Աղքատներ	594	12.07	2742	14.13
Ընդամենը	4920	100.00	19407	100.00

Աղքատության գիծը. մեկ շնչին ընկնող միջին ընթացիկ ծախսերի մեղիանի 40%-ը

	Տնային տնտեսությունների		Բնակչություն	
	Թվաքանակը	%	Թվաքանակը	%
Ոչ աղքատներ	4550	92.48	17749	91.46
Աղքատներ	370	7.52	1658	8.54
Ընդամենը	4920	100.00	19407	100.00

3.3 Բացարձակ աղքատության գծի հաշվարկները հենվում են սննդամթերքի ձեռքբերման համար տնային տնտեսությունների կատարած ծախսերի վրա: Ընդ որում, ընտրվել են բացարձակ աղքատության երկու չափանիշներ՝ պարենային գիծը (Food line) և աղքատության ընդհանուր գիծը (Poverty line):

Աղքատության պարենային գիծը. Աղքատության պարենային գծի հաշվարկման համար ուսումնասիրված բոլոր ղեցիլային խմբերում առանձնացվել են սննդամթերքի ամենահաճախ օգտագործվող 24 տեսակներ: Քանի որ 3-7-րդ ղեցիլներում կենտրոնացված է աղքատ բնակչության հիմնական մասը, ապա սննդամթերքի փաստացի սպառումը հաշվարկված է մեկ շնչի հաշվով նրանց միջին սպառման ծավալների հիման վրա: Այն մեկ շնչի հաշվով օրական կազմել է 2040 կիլոկալորիա: Միևնույն ժամանակ նկատի ունենալով զարգացող երկրներում շնչային սպառման էներգետիկայի FAO¹-ի կողմից առաջարկվող մակարդակը (օրական 2100 կկալ), ընտրված սննդատեսակների վերակշռման ճանապարհով կատարվեց աղքատության գծի վերահաշվարկ: Արդյունքում ստացված փաստացի պարենային զամբյուղը (բնամթերային արտահայտությամբ) համարվել է նվազագույն պարենային զամբյուղ, իսկ վերջինի դրամական արտահայտությունը՝ աղքատության պարենային գիծ:

Նվազագույն պարենային զամբյուղի արժեքի գնահատման համար հարցաթերթիկներից հանվեցին միջին տարածքային գները:

Փաստացի պարենային զամբյուղի (աղքատության պարենային գծի) արժեքը հանրապետության մակարդակով բնակչության մեկ շնչի հաշվով կազմեց ամսական 6612 դրամ:

Comment:

¹ ՄԱԿ-ի գյուղատնտեսության և սննդի կազմակերպություն

3.4 Աղքատության ընդհանուր գիծը.

Աղքատության ընդհանուր գծի հաշվարկման համար օգտագործվել են այն տնային տնտեսությունների տվյալները, որոնց ծախսերը սննդամթերքի վրա հավասար կամ շատ մոտ էին փաստացի նվազագույն պարենային զանբյուրի արժեքին: Նշված ձևով առանձնացված տնային տնտեսությունների փաստացի ծախսերի կառուցվածքի հիման վրա հաշվարկվել է տնային տնտեսությունների կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարած ծախսերի գործակիցը:

Այնուհետև, պարենային զանբյուրի արժեքը, վերահաշվարկված ապրանքների ու ծառայությունների վրա կատարած ծախսերի գործակիցով, ընդունվել է որպես փաստացի սպառողական զանբյուր, կամ, ինչպես վերը նշվեց, աղքատության ընդհանուր գիծ: Դա էլ մեկ շնչի հաշվով 1996թ. դեկտեմբերին կազմել է 10784 դրամ:

3.5 Աղքատության խմբավորումը.

Ուսումնասիրված համախմբությունն ըստ աղքատության չափանիշի բաժանվել է երեք հիմնական խմբերի. շատ (ծալրահեղ) աղքատ (Very Poor) են համարվել այն տնային տնտեսությունները, որոնց մեկ շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը ցածր

Ներդիր 9. Նվազագույն պարենային զանբյուր:

Հանրապետության բնակչության 1/3 -ը, որը բնակվում է գյուղական վայրերում, սպառում էր սեփական արտադրության սննդամթերքի մեծ մասը /65-70%-ը/: Բնակչության 2/3 -ը կազմող քաղաքային բնակչությանը բնորոշ էր սեզոնային բնույթ ունեցող սննդամթերքի պաշարներ ստեղծելը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ընթացիկ ծախսերի կառուցվածքի 50%-ը կազմում են սննդամթերքի ծախսերը: Ծայրահեղ աղքատների շրջանում դրանք հասնում էին 73%-ի, իսկ ամենաապահովվածների շրջանում՝ 31%: Ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները բնութագրվում էին սննդամթերքի ցածր սպառումով և սուր պարենային անհավելյալությամբ:

Ամենահաճախ սպառվող սննդամթերքներն էին հացը և հացամթերքը, կարտոֆիլը, յուղն ու ճարպը: Շատ ցածր է այնպիսի սննդատեսակների սպառումը, ինչպիսիք են մսամթերքը, կաթնամթերքը, մրգերը և բանջարեղենը:

Նվազագույն պարենային զանբյուրը կազմվել է հինը ընդունելով հետազոտվող ժամանակահատվածում սննդամթերքի փաստացի սպառումը: Հիմնականում /մեծ հաճախականությամբ/ օգտագործվող 24 սննդատեսակների գումարային էներգետիկան կազմել է 2100 կիլոկալորիա, որի շուրջ 65%-ը բաժին է ընկել հացին և հացամթերքին:

Նվազագույն պարենային զանբյուրի կառուցվածքն ըստ բնակչության փաստացի սպառման.


Սննդամթերքի տեսակը	Մեկ շնչի հաշվով օրական սպառումը, գրամ	Մեկ շնչի հաշվով ամսական սպառումը, դրամ	Սննդամթերքի էներգետիկան, կկալ	Պարենային զանբյուրի էներգետիկայի կառուցվածքը, %
1. Բրինձ	17.19	149	71	3.40
Ընդեղեն	18.03	169	44	2.10
Ցորենի ալյուր	19.64	120	67	3.19
Ցորենի հաց	427.39	2244	1124	53.52
Մակարոնեղեն	25.62	187	89	4.24
Լավաշ	28.62	262	76	3.61
Տավարի միս	17.82	513	39	1.85
Թռչնի միս	4.07	117	3	0.16
Չկնդեղեն	15.00	146	11	0.53
Կաթ	27.12	143	18	0.85
Մածուց	18.27	110	14	0.69
Կոշտ պանիր	12.48	317	51	2.45
Չու	7.60	223	10	0.48
Կարագ	3.46	141	26	1.21
Չեք	6.53	98	59	2.79
Յուղ	19.70	621	165	7.88
Խնձոր	44.24	159	19	0.88
Խաղող	4.96	28	3	0.13
Ցիտրուսներ	3.30	24	1	0.04
Կոմպոտ	14.92	45	11	0.55
Կաղամբ	45.85	69	12	0.57
Սոյա	12.19	33	4	0.20
Կարտոֆիլ	192.45	560	115	5.50
Շաքար	16.93	134	67	3.18
Ընդամենը		6612	2100	100%

Փաստացի պարենային զանբյուրն իր կառուցվածքով հիշեցնում էր բարձրարժեք սննդամթերքի (միս, կաթ, մրգեր) փոխարեն ցածրարժեք սննդամթերքի (հաց, կարտոֆիլ) հավելյալ սպառմամբ բնութագրվող գոյատևման բյուջե:

են եղել աղքատության պարենային գծից: Աղքատ (Poor) են համարվել այն տնային տնտեսությունները, որոնց մեկ շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը ցածր են եղել աղքատության ընդհանուր գծից: Ոչ աղքատ (Non Poor) են համարվել այն տնային տնտեսությունները, որոնց մեկ շնչի հաշվով միջին ընթացիկ ծախսերը բարձր էին աղքատության ընդհանուր գծից:

Ունենալով աղքատ և շատ աղքատ տնային տնտեսությունների քանակը՝ դժվար չէր հաշվարկել աղքատ բնակչության թիվը: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրված բնակչության բաշխումն ըստ աղքատության վերոհիշյալ խմբերի ունի հետևյալ պատկերը.

Գծապատկեր 12. Բնակչության բաշխումը ըստ աղքատության խմբերի



Ելնելով այս կշիռներից, և հիմք ընդունելով առկա բնակչության թվաքանակը, 1996թ. վերջին հանրապետությունում առկա են եղել մոտ 1.7-1.8 մլն. աղքատներ, որոնցից՝ 800-900 հազարը շատ աղքատ էին:

Աղյուսակ 19. Տնային տնտեսությունների և բնակչության բաշխումն ըստ աղքատության խմբերի

	Տնային տնտեսություններ		Բնակչություն	
	Թվաքանակը	%	Թվաքանակը	%
Ոչ աղքատներ	2461	50.02	8785	45.27
Աղքատներ	1271	25.83	5252	27.06
Շատ աղքատներ	1188	24.15	5370	27.67
Ընդամենը	4920	100.00	19407	100.00

3.6 Աղքատության ուսումնասիրություններում աղքատության գծից բացի կարևորվում են հետևյալ ցուցանիշները՝


- աղքատության խորությունը ($P\alpha_1$), որը բնութագրում է, թե աղքատության գծից վար, ի՞նչ խորության վրա են աղքատները,
- աղքատության սրությունը ($P\alpha_2$), որը ցույց է տալիս, թե որքա՞ն շատ աղքատներ են կենտրոնացած աղքատության ստորին մակարդակում,
- աղքատ բնակչության ծախսերի միջին պակասությունը, որը բնութագրում է, թե միջին աղքատի ծախսերը որքա՞նով են պակաս աղքատության գծից:

Հաշվարկները, որոնց արդյունքները բերված են աղյուսակ 23-ում, ցույց են տալիս, որ աղքատության խորությունը հանրապետությունում կազմել է 21,5%, իսկ սրությունը՝ 11,1% : Երկու ցուցանիշներն էլ վկայում են, որ աղքատ բնակչության զգալի մասը գտնվում է աղքատության գծից շատ ներքև:

Աղյուսակ 20. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի (տոկոսներով՝ ողջ բնակչության քվարանակում)

Մարզեր	Աղքատության մակարդակը	Աղքատների ծախսերի միջին պակասորդը	Աղքատության խորությունը	Աղքատության սրությունը
Արագածոտն	51.1	35.43	18.1	8.5
Արարատ	54.2	37.94	20.6	10.5
Արմավիր	38.1	32.79	12.5	5.8
Գեղարքունիք	48.1	36.02	17.3	8.5
Լոռի	51.5	35.68	18.4	8.9
Կոտայք	62.4	40.59	25.3	13.5
Շիրակ	63.1	43.02	27.2	15.2
Սյունիք	47.1	34.87	16.4	8.1
Վայոց ձոր	61.5	46.62	28.7	17.5
Տավուշ	56.1	46.41	26.1	14.9
Երևան	58.2	39.81	23.2	11.6
Հայաստան	54.7	39.32	21.5	11.1

Գծապատկեր 13. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի



4. Աղքատության տարածքային բնութագիրը

4.1 Քաղաքային բնակչությունը գտնվում էր ավելի վատ տնտեսական վիճակում. նրանց 29,2%-ը աղքատության գծից ներքև էին, իսկ ևս 29,6%-ը՝ շատ աղքատ:

Քաղաքներում բնակչության աղքատացումը պայմանավորված էր ձեռնարկությունների (հատկապես արդյունաբերական) ճգնաժամային վիճակով. վերջինները փակվում էին, կամ վերակազմավորվում՝ մի քանի անգամ կրճատելով աշխատակազմը, կամ էլ երկարատև պարապորդների մեջ էին՝ կապված էլեկտրաէներգիայի, հումքի մատակարարման և իրացումների դժվարությունների հետ: Այս ամենի բնական հետևանքն էր՝ իրական և թաքնված գործազրկության շոշափելի աճը, աշխատավարձի ուշացումները և առաջարկվող աշխատուժի չափազանց ցածր գինը (տես՝ Ներդիր 10):

1996թ-ին 1991-ի համեմատ հանրապետության տնտեսությունում զբաղվածների թվաքանակը (առանց գյուղատնտեսության մեջ զբաղվածների) կրճատվել էր 39%-ով:

Ներդիր 10. Չբաղվածությունն ու աշխատավարձը հանրապետությունում:

Ըստ ՀՀ Վիճվարչության աշխատանքի շուկայի և աշխատավարձի բաժնի տվյալների և գնահատականների, զբաղված բնակչության տեսակարար կշիռն աշխատանքային ռեսուրսներում 1992 - 1996թթ. դրսևորել է նվազման կայուն միտում և 1996թ. կազմել է 66,7% 1992թ. 76,6%-ի դիմաց:

Միևնույն ժամանակ արագ աճել է տնտեսապես ոչ ակտիվ բնակչության և գործազուրկների թվաքանակը: Այսպես, տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թվաքանակը 1992թ. համեմատությամբ 1996թ. ավելացել է 48,6%-ով, իսկ պաշտոնապես զբաղված գործազուրկների միջին տարեկան թվաքանակը՝ համապատասխանաբար 5,1 անգամ /տես աղյուսակը/:

	1990	1991	1992	1993	1994	1995	1996
տնտեսապես ակտիվ բնակչություն							
զբաղված են տնտեսության մեջ	1630.1	1671.5	1578.1	1543.3	1487.6	1476.4	1435.6
զբաղվածության ծառայություններում զբանցված գործազուրկներ	-	-	29.1	86.9	105.5	105.5	147.9
աշխատունակ տարիքի տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն							
արտադրությունից կտրված ուսուցմամբ սովորողներ	157.6	158.1	144.4	130.2	121.6	110.8	113.8
աշխատունակ տարիքի տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն (առանց սովորողների)	243.1	224.4	307.2	336.7	414.6	439.9	456.4

Կառուցվածքային բարեփոխումների արդյունքում նվազել է զբաղվածությունը տնտեսության պետական հատվածում (47,3%-ով) և, ընդհակառակն՝ աճել մասնավոր հատվածում (45,9 %-ով):

Չբաղվածության կառուցվածքային տեղաշարժերը դեռևս էականորեն չեն ազդել անվանական աշխատավարձերի մակարդակի վրա: Այսինքն, այս կամ այն ճյուղում զբաղվածության նվազումը չի հանգեցրել աշխատավարձի զգալի բարձրացման, ինչը վկայում է հանրապետության աշխատանքի շուկայի ոչ էլաստիկության մասին:

Չբաղվածության կառուցվածքի և միջին ամսական աշխատավարձերի մակարդակի փոփոխությունները 1994-1996թթ. ըստ տնտեսության հիմնական ճյուղերի բնութագրվում է ստորև բերված տվյալներով.

	Զբաղվածների թվաքանակի բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի (տոկոսներով ամբողջի մեջ)		Տնտեսության ճյուղերում միջին ամսական աշխատավարձերի հարաբերակցությունը (տնտեսության միջինը =100)	
	1994	1996	1994	1996
Ընդամենը տնտեսության մեջ	100	100	100	100
Արդյունաբերություն	23.9	17.8	143.5	143.2
Գյուղատնտեսություն	33.8	40.6	59.0	94.1
Անտառտնտեսություն	0.1	0.2	68.1	94.1
Շինարարություն	6.5	4.7	90.1	157.0
Տրանսպորտ և կապ	3.7	3.3	221.3	179.8
Առևտուր, հասարակական սնունդ, գնումներ և իրացում (ԵՏՄ և առաքում), մթերումներ	4.3	7.7	82.9	68.0
Բնակ. կոմունալ տնտեսություն, բնակչության կենցաղսպասարկում	3.9	3.5	70.6	102.8
Ստորջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովում	5.6	5.7	51.3	58.9
Կրթություն	9.9	9.9	42.3	45.8
Մշակույթ և արվեստ	2.3	2.2	45.1	50.5
Գիտություն և գիտական սպասարկում	1.8	1.0	88.9	93.9
Վարկավորում և ապահովագրություն	0.5	0.5	499.5	264.8
Կառավարման մարմինների ապարատ	2.0	2.0	64.9	122.1
Այլ ճյուղեր	1.6	0.8	53.2	81.2

4.2 Գյուղական բնակավայրերում բնակչությունը մի փոքր ավելի լավ պայմաններում էր գտնվում՝ կապված հողի սեփականաշնորհման հետ: Վերջինը նպաստեց ինչպես սեփական սպառմանը, այնպես էլ ապրանքային գյուղատնտեսական արտադրության աճին :

Չնայած բարենպաստ տնտեսական պայմաններին, գյուղական վայրերում ևս աղքատության մակարդակը բավական բարձր է, աղքատներն այստեղ կազմում էին 23,6%, շատ աղքատները՝ 24,4%:

Ներդիր 11. Գյուղացիական տնտեսությունների արդյունավետությունը:

ՀՀ Վիճվարչության կողմից 1997թ. մարտին ուսումնասիրված 3400 գյուղացիական տնտեսությունների 48% ունեին մինչև 1 հեկտար գյուղատնտեսական հողեր, և 28%-ը՝ 1-2 հեկտար: Հետևապես գյուղացիական տնտեսությունների ավելի քան 3/4-ը ունեին 2 հեկտարից պակաս հողատարածություն, իսկ եթե նկատի առնել, որ հողաբաժինները տրոհված էին 2-3 տարբեր հողակտորների, ապա կարելի է նշել, որ գյուղացիական տնտեսությունները տնտեսավարում էին զաճաճ հողակտորների վրա:

Այս երևույթն առավել բնորոշ էր Արարատյան դաշտավայրի տնտեսություններին: Դաշտավայրային գոտուց դեպի լեռնային շրջաններ հեռանալուն զուգընթաց մեկ տնտեսությանն ընկնող հողատարածքները մեծանում են: Ընդ որում, եթե առաջիններն աչքի են ընկնում ինտենսիվ երկրագործությամբ, այսինքն, հարթավայրային գոտու թանկարժեք մշակաբույսերի զարգացմամբ, ապա երկրորդները բնութագրվում են հիմնականում էքստենսիվ երկրագործության և անասնապահության զարգացմամբ:

Գյուղացիական տնտեսությունների /ԳՏ/ արդյունավետության ցուցանիշները բերված են ստորև.

	ԳՏ խմբերն ըստ հողատարածքի	ԳՏ-ների թիվը	Մեկ հեկտարի հաշվով			Մեկ զբաղվածի հաշվով		
			Զբաղված աշխատող- ների թիվը (մարդ)	Արտա- դրական ծախսերը	Իրաց- ված արտա- դրանքը	Հողատա- րածքը (հա)	Արտադրա- կան ծախսերը	Իրաց- ված արտա- դրանքը
1	Մինչև 0,5 հա	625	6,65	218,3	543,8	0,15	32,9	82,0
2	0,5 - 1 հա	952	3,46	121,7	250,6	0,29	35,1	72,2
3	1 - 2 հա	917	1,92	85,5	140,2	0,52	44,6	73,2
4	2 - 3 հա	405	1,10	53,3	71,4	0,90	48,1	64,5
5	3 - 5 հա	321	0,78	37,8	48,4	1,27	49,1	62,8
6	5 - 7 հա	148	0,54	37,9	39,5	1,84	68,6	71,6
7	7 և ավելի հա	29	0,45	35,4	26,3	2,23	76,4	56,8
	Ընդամենը	3397	1,61	69,0	114,9	0,62	43,0	71,6

Աղյուսակի տվյալներից կարելի է նկատել հանրապետության գյուղատնտեսությանը բնորոշ մի օրինաչափություն, այն է՝ **ի տարրերություն մեծ տնտեսությունների, փոքր տնտեսություններում ավելի մեծ ծավալի աշխատանքային և նյութական ռեսուրսներ են օգտագործվում ինչպես միավոր հողատարածության, այնպես էլ մեկ աշխատողի հաշվով:**

Ինչպես հետևում է բերած հաշվարկներից, առաջին խմբի տնտեսություններում (մինչև 0,5 հա հողատարածք) մեկ հեկտարի հաշվով զբաղված էին 6-7 աշխատող և կատարվել են 218 հազար դրամի նյութական ծախսեր, ինչը գերազանցում է 7-րդ խմբի տնտեսությունների (7 հեկտարից ավել) համանման ցուցանիշները՝ համապատասխանաբար 15 և 6,2 անգամ:

Իրացված արտադրանքի ծավալն առաջին խմբի տնտեսություններում 7-րդ խմբի համեմատ 20 անգամ ավելի մեծ է:

Վերոհիշյալ օրինաչափությունը հիմնականում պայմանավորված է փոքր և մեծ տնտեսությունների աշխարհագրությամբ: Փոքր տնտեսությունների հիմնական հասցեն սակավահող և բարձր արգավանդ հողերով Արարատյան դաշտավայրն է իր նպաստավոր տնտեսական պայմաններով (հաղորդակցության միջոցներ, շուկաների առկայություն): Մինչդեռ մեծ տնտեսությունների հիմնական հասցեն լեռնային շրջաններն են, իրենց դժվարին բնական պայմաններով, ուր հողատարածքի “առատությունը” շատ բանով բացատրվում է աննպաստ տնտեսական պայմաններով:

Աղյուսակ 2.2՝ Վիճակագրության գյուղատնտեսական տնտեսությունների հետազոտություն, 1997, մարտ

4.3 Գյուղական բնակչության տնտեսական վիճակի վրա որոշակի ազդեցություն ունի գյուղական բնակավայրի աշխարհագրական բարձրությունը:

Գյուղական բնակչության բնակության տարածքն ըստ բարձրության բաժանված է 3 գոտիների.

- I. մինչև 1300 մ ծովի մակերևույթից բարձր, որտեղ ապրում է գյուղական բնակչության 39 %-ը;
- II. 1300 -ից 1700 մ ծովի մակերևույթից բարձր՝ բնակչության 26 %-ը;
- III. 1700 մ և ավելի բարձր՝ բնակչության 35 %-ը:

Ինչքան բնակավայրը բարձր է ծովի մակերևույթից, այնքան ավելի վատ տնտեսական պայմաններում է գտնվում այնտեղ ապրող բնակչությունը :

Աղյուսակետ գյուղատնտեսություն վարելու համար առավել բարենպաստ են հարթավայրային շրջանների պայմանները. այստեղ ոչ աղքատների տեսակարար կշիռը կազմում է 54,3% (գյուղական բնակչության համար միջին 52%-ի դիմաց):

Եթե շատ աղքատ գյուղական բնակիչների միջին տեսակարար կշիռը կազմում է 24.4%, ապա բարձրության I-ին գոտում այդպիսիք կազմում են 21.6%, II-ում՝ 25.8%, III-ում՝ 26.8%:

Աղյուսակ 21. Գյուղական վայրերում աղքատության համեմատական վերլուծությունն ըստ բարձրության գոտիների

	Տնային տնտեսություններ			Բնակչություն		
	Բարձրության գոտին			Բարձրության գոտին		
	1	2	3	1	2	3
Ոչ աղքատներ	58.6	57.1	53.0	54.3	51.6	49.6
Աղքատներ	23.0	20.6	22.5	24.1	22.5	23.6
Շատ աղքատներ	18.4	22.3	24.5	21.6	25.8	26.8
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

4.4 Շատ աղքատ բնակչությունը կենտրոնացած է հիմնականում աղետի և սահմանամերձ գոտիներում, այսինքն՝ տնտեսապես ոչ ակտիվ տարածաշրջաններում: Եթե ամբողջ հանրապետությունում շատ աղքատները կազմում են 27,7%, ապա աղետի գոտում՝ 30%: Ի դեպ քաղաքային բնակավայրերում այս երևույթն ավելի սուր է արտահայտված:

Ինչ վերաբերում է սահմանամերձ գոտուն, ապա այստեղ շատ աղքատները կազմում են 29,2 % և կենտրոնացած են

Ներքին 12. Աշխարհագրական բարձրություն:


Հայաստանը լեռնային երկիր է, որի տարածքի շուրջ 90%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1000 մետրից բարձրության վրա: Տարածքի միջին բացարձակ բարձրությունը 1830 մ է: Ամենաբարձր կետը Արագած լեռն է (4090 մ), իսկ ամենացածր կետերը գտնվում են հանրապետության հյուսիս-արևելքում՝ Գեբեղ գետի կիրճում և հարավ-արևելքում՝ Արաքս գետի կիրճում (350-400 մ):

Հանրապետության տարածքում գյուղական բնակչությունը տեղաբաշխված է անհավասարաչափ: Գա պայմանավորված է ռելյեֆի լեռնային բնույթով: Ի լրումն գյուղական բնակչության ըստ գոտիների բաշխվածության վերը բերված տվյալների, հարկ է նշել, որ ծովի մակերևույթից 2000մ և ավելի բարձր լեռնային տարածքներում մշտապես ապրող բնակչություն առհասարակ չկա:

Բնակչության ամենամեծ խտությունը դիտվում է Արարատյան հարթավայրում՝ ինտենսիվ ոռոգելի հողագործության շրջանում: Այստեղ 1 քառ.կմ մակերեսի վրա բնակվում են 160 գյուղական բնակիչներ: Հանրապետության մնացած տարածքում գյուղական բնակչության խտությունը կազմում է 27 մարդ 1 քառ. կմ վրա:

գլխավորապես գյուղական վայրերում: Վերջինը կապված է վարելահողերի մշակման մեծ դժվարությունների հետ:

Գծապատկեր 14. Աղքատ և շատ աղքատ բնակչության տեսակարար կշիռն ըստ մարզերի



5. Ուլքե՞ր են աղքատները

Աղքատների մեջ բնակչության ամենահաճախ հանդիպող խմբերն են՝

- մեծ և բազմազավակ ընտանիքները
- գործազուրկները
- թոշակառուներն ու հաշմանդամները
- բավարար կրթական մակարդակ չունեցող անձիք

Բնակչության վերը թվարկված խմբերն ամենավտանգվածն են աղքատության տեսակետից: Աղքատության կրճատմանն ուղղված պետական քաղաքականության մշակման և վարման համար շատ կարևոր է վտանգի խմբերում աղքատության առանձնահատկությունների վերլուծությունը:

5.1 Տնային տնտեսության չափը, երեխաները և աղքատությունը:

Աղքատության վտանգը կախված է տնային տնտեսության կառուցվածքից և խնամառուների թվից: 7 տարեկանից փոքր կամ 3 և ավելի երեխաներ ունեցող, ինչպես նաև բազմանդամ տնային տնտեսություններն ամենաշատն են ենթակա աղքատության մեջ հայտնվելու վտանգին: Եթե ընտրանքային համախմբության համար տնային տնտեսության միջին չափը կազմել էր 3,9 մարդ, ապա աղքատների՝ 4,1, իսկ շատ աղքատների՝ 4,5 մարդ: Շատ աղքատ տնային տնտեսություններն ունեն ամենամեծ ծանրաբեռնվածությունը երեխաներով՝ 1,55, ոչ աղքատ տնային տնտեսությունների 1,07 -ի դիմաց: Մեկ երեխա ունեցող ամուսնական զույգերի մեջ շատ աղքատները կազմում էին 20,7%, երկու երեխա ունեցողների մեջ՝ 19,5%, երեք և ավելի երեխա ունեցողների մեջ՝ 27,3 %:

Ծայրահեղ աղքատություն առկա էր 8 և ավելի անդամներ ունեցող տնային տնտեսություններում: Շատ աղքատները այդպիսի տնային տնտեսություններում կազմում էին 40,2%, աղքատները՝ 23,4% և միայն 36,4%-ն էր, որ աղքատ չէր:

Մինչև 7 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունները շատ ավելի հաճախ էին հայտնվում շատ աղքատների շարքում, քան անզավակ ընտանիքները: Մինչև 7 տարեկան երեխաների 33%-ը շատ աղքատ էին:

Ներդիր 13. Համարժեքության սանդղակներ

Սույն զեկույցում զետեղված աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշների համակարգը հիմնված է մեկ շնչին ընկնող միջին ծախսերի հաշվարկի վրա: Մակայն, վերջին տարիներին միջազգային պրակտիկայում լայն տարածում է գտել աղքատության մակարդակի որոշումը համարժեքության սանդղակների կիրառման միջոցով:

Համարժեքության սանդղակների /Equivalence Scales/ կառուցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ մեկ միավորի ծախսը համախմբության մասշտաբների մեծացմանը զուգընթաց նվազում է /տնտեսում մասշտաբների մեծացման հաշվին/: Այս գաղափարը աղքատության մակարդակի հաշվարկման մեթոդաբանության մեջ կիրառելիս, նկատի է առնվում, որ մեկ շնչի հաշվով ծախսերը բազմանդամ ընտանիքներում համարժեք չեն փոքրանդամ ընտանիքների նույն ցուցանիշին, քանի որ առաջին դեպքում գործում է տնտեսման օրենքը: Ուստի գիտնականների կողմից մշակվել են համարժեքության սանդղակներ:


Միջազգային համեմատությունների համար օգտագործվում է Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (OECD) սանդղակը, ըստ որի ընտանիքի գլխավորը մեկ շնչին ընկնող ցուցանիշների հաշվարկներում ստանում է 1,0 գործակիցը, ընտանիքի այլ մեծահասակները՝ 0,7, իսկ երեխաները՝ 0,5: Ռուսաստանի գիտնականները գործածում են հետևյալ սանդղակները. ընտանիքի յուրաքանչյուր մեծահասակի համար՝ 1,2 գործակիցը, երեխաների համար՝ 1,01, թոշակառուների համար՝ 0,7: Նշենք, որ Ռուսաստանի սանդղակը հաշվարկված է տնային տնտեսությունների անդամների անհատական սպառման վերաբերյալ տվյալների հիման վրա: Միջազգային մասնագետների կարծիքով, այն հնարավոր չափով հաշվի է առնում անցումային երկրների սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները:

Ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտանիքում մեկ երեխայի առկայությունը մնացած բոլոր հավասար պայմաններում մեծացնում է աղքատության խորությունը երեխա չունեցող ընտանիքի համեմատությամբ 6,9%-ով:

Աղքատության կախվածությունն ընտանիքի չափից, երեխաների առկայությունից և նրանց թվաքանակից պատկերված է գծապատկեր 15-ում:

Գծապատկեր 15. Աղքատությունը և տնային տնտեսության չափը

5.2 Գործազուրկներ:
Գործազրկությունը սերտորեն կապված է աղքատության հետ: Ըստ հետազոտության արդյունքների, իրական գործազրկության մակարդակը (տնտեսապես ակտիվ բնակչության 28,3%) պաշտոնական մակարդակից շատ ավելի բարձր էր: Իրական գործազուրկների 36%-ը համարում էին շատ աղքատների շարքերը: Համեմատության համար նշենք, որ շատ աղքատ էին զբաղվածների 21%-ը: Չբաղված բնակչության մեջ ոչ աղքատները կազմել են 53,5%, իսկ գործազուրկների մեջ՝ ընդամենը 36% (տես՝ գծապատկեր 16): Ռեգրեսիոն վերլուծությունը ցույց տվեց, որ տնային տնտեսությունում մեկ գործազուրկ անդամի առկայությունը մեծացնում է ընտանիքի աղքատության խորությունը 6,5 %-ով:




Գծապատկեր 16. Աղքատության մակարդակը գործազուրկների մեջ

Գործազրկության նպաստը՝ 2192 դրամ, կազմել է աղքատության պարենային գծի 33,2%-ը և աղքատության գծի 20,3%-ը:

Հետազոտությունը ցույց տվեց, որ գործազուրկների մի փոքր մասը՝ մոտ 4,0%-ը հատկապես տղամարդիկ, ունեցել է պատահական վատակներ կամ զբաղված է եղել տնտեսության ոչ ֆորմալ հատվածում:

Գործազրկության ազդեցությունը գործա-



զուրկների և նրանց ընտանիքների կենսամակարդակի վրա կախված է դրա տևողությունից: Ըստ հետազոտության արդյունքների, գործազրկության միջին տևողությունը (կշռված ըստ գործազուրկների թվաքանակի) կազմել է 19,5 ամիս, ընդ որում գործազուրկների 14,4%-ը աշխատանք չեն ունեցել վեց ամսից քիչ ժամանակահատվածում, իսկ 41,3%-ը՝ մեկ տարուց ավել: Հանրապետությունում բավական շատ են հուսահատ գործազուրկները:

Անցումային ժամանակաշրջանում աշխատանք ունենալը նույնպես դեռևս ապահով ապրուստ ունենալու երաշխիք չէ. յուրաքանչյուր հինգերորդ զբաղված շատ աղքատ է: Դրանք հավանաբար հիմնականում բյուջետային ոլորտի աշխատողներն են. ըստ պաշտոնական վիճակագրության բյուջետային ոլորտում միջին ամսական աշխատավարձը 1996թ. կազմում էր 5122 դրամ (դա 22,5%-ով ցածր էր աղքատության պարենային գծից և ավելի քան 2 անգամ՝ աղքատության ընդհանուր գծից), այն էլ հաճախ վճարվում էր մեծ ուշացումներով:


Ներդիր 14. Գործազրկությունը Հայաստանում:

Ի տարբերություն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հանձնարարականների, Հայաստանի Հանրապետության Զբաղվածության մասին օրենքը գործազուրկ է համարում այն անձանց, ովքեր աշխատանք չունենալուց, այն փնտրելուց և դրան պատրաստ լինելուց զատ ունեն առնվազն մեկ տարվա ստաժ և գրանցվել են զբաղվածության ծառայություններում: 1996թ. նոյեմբերին ՀՀ Վիճվարչության կողմից հանրապետության 1200 տնային տնտեսություններում անցկացված աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների համաձայն զբաղվածության ծառայություններում գրանցված են եղել ԱՄԿ չափանիշներին համապատասխանող գործազուրկների միայն քառորդ մասը (24,6%): Փաստորեն, յուրաքանչյուր չորս գործազուրկից միայն մեկն է դիմել զբաղվածության ծառայության, ընդ որում զբաղվածության ծառայությունների նկատմամբ այս մոտեցումը բավական կայուն է. 1995թ. նույն ժամանակահատվածում անցկացված նման հարցման արդյունքների համաձայն 3.8 գործազուրկից մեկն էր միայն դիմել այդ ծառայություններին՝ աշխատանք ստանալու նպատակով: Այստեղ իրենց դերն են կատարել նաև գործազուրկի կարգավիճակից ակնկալվող սոցիալական թույլ երաշխիքները, զբաղվածության ծառայությունների աշխատանքի դեռևս ցածր արդյունավետությունը (աշխատանքի տեղավորման, որակավորման բարձրացման, վերաորակավորման, հոգեբանական աջակցության ուղղությամբ և այլն):

Հանրապետությունում դեռևս նշանակալի է երկարատև գործազրկության մակարդակը: Այսպես, վերոհիշյալ հետազոտությունը ցույց տվեց, որ գործազուրկների 3.3% աշխատանք

է փնտրում մինչև 1 ամիս, 6.2%-ը՝ 1-3 ամիս, 9.5%-ը՝ 3-6 ամիս, 19.2%-ը՝ 6-12 ամիս, իսկ նրանց ստվար մասը՝ 61.7%-ը, 12 ամսից ավելի: Աշխատանք փնտրելու միջին տևողությունը կազմում է 26.2 ամիս: Սա վկայում է առ այն, որ գործազրկությունն հանրապետությունում լճացած բնույթ է կրել:

Աշխատանք չունեցողների բաշխումն ըստ աշխատանք չունենալու տևողության գրաֆիկորեն պատկերվում է ստորև.



Որպես աշխատանք չունենալու հիմնական պատճառներ հարցվածները նշել են. աշխատանքի կորուստը՝ կապված ձեռնարկության լուծարման հետ՝ 39.1%, աշխատանքից ազատվելը սեփական կամքով՝ 9.7%, հարմար աշխատանք չգտնելը՝ 28.7%, ոչ մի տեսակի աշխատանք չգտնելը՝ 9.7%, ԲՈՒՀ-ում կամ տեխնիկումում ուսումն ավարտելուց հետո չաշխատելը՝ 7.5% և այլ պատճառները՝ 5.3%:

Գործազուրկների 53.2% փորձել է աշխատանք ստանալ ծանոթների, բարեկամների միջնորդությամբ, 7.2%՝ հայտարարությունների միջոցով, 14% փորձել է սկսել սեփական գործ, իսկ 1%՝ այլ ճանապարհով:

Աշխատանք չունեցողների 18.6% այսպես կոչված հուսազուրկ գործազուրկներն են, այսինքն նրանք, ովքեր ուզում են և պատրաստ են աշխատել, սակայն դադարել են ակտիվ կերպով աշխատանք փնտրել:

Գործազուրկների ընդհանուր թվաքանակի 15.9% նախկինում զբաղված է եղել արդյունաբերությունում, 6.2%-ը՝ շինարարության, 6.2%-ը՝ պետական կառավարման և պաշտպանության ոլորտում, 5.7%-ը՝ առևտրում, 5.2%-ը՝ կրթության, 3.5%-ը՝ տրանսպորտի և կապի, 1.8%-ը՝ առողջապահության բնագավառում, 32.8%-ը՝ տնտեսության այլ ճյուղերում, իսկ 22.7% աշխատանք է փնտրում առաջին անգամ: Գործազուրկների 97.9% եղել են վարձու աշխատողներ, 0.8%-ը՝ գործատուներ, 0.8%-ը՝ ինքնազբաղվածներ:

Գործազուրկների 65.8% ունի մասնագիտություն, ընդ որում նրանց 59.3% ունի կրթական որոշակի մակարդակ (բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական) պահանջող մասնագիտություններ:

Ընտրանքային հետազոտության արդյունքներից ստացվում է, որ բացահայտ գործազրկության իրական մակարդակը (առանց հուսազուրկների) հանրապետությունում հասնում է 29,1% :

Աղբյուր՝ ՀՀ Վիճվարչության աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքները, 1996թ., նոյեմբեր

5.3 Թոշակառուներ և հաշմանդամներ:

Անցումային ժամանակաշրջանն ուղեկցվում է ծնելիության կրճատմամբ, աշխատունակ տարիքի բնակչության արտագաղթով և որպես հետևանք, բնակչության ծերացմամբ: Դրա վկայությունն է աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության թվաքանակի աճը (1996թ-ին 1991թ. համեմատ՝ 2,9%-ով): Բնակչության այս խմբի աճի տեմպերը մոտ 4 անգամ գերազանցել են ամբողջ բնակչության աճի տեմպերը:

Աճել է աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը. 1991թ. 12,5%-ից մինչև 14,6%՝ 1996թ-ին: Վերջինս առաջ է բերել տարիքային թոշակառուների թվաքանակի աճ: Բացի այդ, ավելի բարձր տեմպերով է աճում հաշմանդամության թոշակառուների քանակը:

1996 թվականի տարեվերջին Հայաստանի թոշակառուների և նպաստառուների թվաքանակը հասավ 748,9 հազարի, թոշակի միջին չափը կազմեց (1996թ. համար) 3152 դրամ, թոշակի նվազագույն չափը՝ 2275 դրամ, մանկությունից հաշմանդամության թոշակի միջին չափը՝ 2435 դրամ, այդ թվում մինչև 16 տարեկան հաշմանդամ երեխաներինը՝ 2640 դրամ: Չնայած թոշակառուների և հաշմանդամների թոշակներն ու նպաստները 2-2.5 անգամ ցածր էին աղքատության պարենային գծից, այնուամենայնիվ թոշակառուներին և հաշմանդամներին ավելի հաճախ էին ձեռք մեկնում բարեգործական ընկերությունները և սոցիալական ապահովության «Փարոս» համակարգը: Դրանով է բացատրվում, որ, օրինակ, միայնակ թոշակառուների մեջ աղքատներն ու շատ աղքատները կազմում են 37%, միջին հանրապետական 54,7%-ի դեպքում:

Միայնակ թոշակառուների աղքատության մակարդակը տարբերակվում է ըստ բնակչության վայրի: Աղքատ էին Երևանում ապրող միայնակ թոշակառուների 48.5%-ը, հանրապետության մյուս քաղաքներում՝ 39.4% և գյուղական վայրերում՝ 28%-ը:

Աղքատությունն ավելի տարածված էր ոչ միայնակ և չաշխատող թոշակառուների շրջանում: Աղքատ էին դրանց 60.6%-ը, մի աստիճան, որը մոտ է գործազուրկների աղքատության մակարդակին :

Ներդիր 15. Գործազուրկությունը՝ ըստ զբաղվածության ծառայությունների տվյալների:

Ըստ պաշտոնական վիճակագրության, 1996թ. տնտեսապես ակտիվ բնակչությունը (առանց հաշվի առնելու արտագաղթը և դրա սեռատարիքային կազմը) կազմում էր բնակչության ընդհանուր թվաքանակի 42%-ը և նախորդ տարվա համեմատ փաստորեն անփոփոխ էր մնացել: Այստեղ նկատի են առնվում զբաղված բնակչությունը և զբաղվածության ծառայությունում պաշտոնապես գրանցված գործազուրկները: Գործազուրկի կարգավիճակ ուներ 159.3 հազար մարդ, որոնց 72.7%-ը կանայք էին:

Քանի որ հանրապետությունում արդեն ավարտված էր հողի սեփականաշնորհումը և գյուղացիներն ունեին իրենց աշխատուժը կիրառելու բնագավառը, գործազուրկների ընդհանուր թվի 94.3%-ը կենտրոնացած էր քաղաքներում, ընդ որում դրանց 60%-ը՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում:

Ըստ պաշտոնական տվյալների, 1996թ. գործազուրկների մեջ բարձրագույն կրթություն ունեցողները կազմում էին 11.8%: 1994թ. համեմատ վերջինների տեսակարար կշիռը փոքրացել էր: Ստորև բերված է 1994-1996թթ. գործազուրկների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի.

	1994		1995		1996	
	Ընդամենը	այդ թվում կանայք	Ընդամենը	այդ թվում կանայք	Ընդամենը	այդ թվում կանայք
Ընդամենը գործազուրկներ, հազ. մարդ այդ թվում կրթությամբ, %	91.8	60.1	131.7	91.8	159.3	115.8
բարձրագույն	16.6	16.3	11.2	11.4	11.8	11.7
միջնակարգ մասնագիտական	24.9	24.2	23.8	23.4	22.7	22.4
ընդհանուր միջնակարգ	51.2	52.8	56.3	57.0	56.0	57.2
թերի միջնակարգ	7.3	6.7	8.7	8.2	9.5	8.7

1996թ. դեկտեմբերին զբաղվածության ծառայությունը կարող էր առաջարկել միայն 525 ազատ աշխատանքային տեղ, գերազանցապես բանվորական մասնագիտություններով:

Աղբյուր՝ ՀՀ Սոցիալական ապահովության նախարարություն:

Կարելի էր ենթադրել, որ թոշակառուների նյութական վիճակը մեղմացնող գործոն է նրանց զբաղվածությունը, սակայն զբաղված թոշակառուների մեծ մասը՝ 80.6%, գտնվում է աղքատության զծից ներքև:

Ներդիր 16. Օգնություն և բարեգործություն թոշակառուների համար:

Ըստ քաղաքաբնակ թոշակառուների հետազոտության արդյունքների, նրանց 75,7% ստացել է բարեգործական օգնություն, ըստ որում. զավակների ընտանիքներում ապրողների 67,9%-ը, թոշակառու զույգերի 82,8%-ը, միայնակների 92,5%-ը. չնայած, ըստ հարցման, օգնության կարիք ունեն բոլոր թոշակառուների 93,7%:

Օգնություն ստացած թոշակառուների 19,1% գնահատում է այն իրենց կենսաապահովման 25%-ի չափով, 4%-ը՝ մինչև 50%-ի, 3%-ը՝ մոտ 75%-ի և 2%-ը՝ 100%-ի չափով: Հետաքրքրական է, որ **նրանց 71,8% գտնում է, որ ստացած օգնությունը էական դեր չի խաղում իրենց կենսաապահովման գործում, ընդ որում նման կարծիքի են առավելապես աղետի գոտու թոշակառուները (78,4%):**

Երևանցի թոշակառուների 17,7%-ն է ապես /50% և ավելի չափով/ կախված է բարեգործությունից, գյումրեցիների և վանաձորցիների՝ 3,8%-ը, այլ քաղաքների թոշակառուների՝ 1,3%-ը: **Կարելի է եզրակացնել, որ բարեգործական օգնության հիմնական ստացողները երևանցի թոշակառուներն են, այն էլ տարեց միայնակ թոշակառուները:**

Թոշակառուների 51,3% ապրում է զավակների հետ, այսինքն արդեն իսկ ստանում է որոշակի հոգատարություն /նյութական և բարոյական/ տեսերունդ ընտանեկան հարաբերությունների շնորհիվ: Ինչ վերաբերում է թոշակառուների մնացած խմբերին /միայնակ, զույգեր և այլ ընտանիքներում ապրող/, **այս նրանց 30%-ի հիմնական օգնողները՝ իրենց զավակներն են, 10,6%-ինը՝ բարեկամները, 1,9%-ինը՝ հարևանները, 18,4%-ինը՝ բարեգործական ընկերությունները, իսկ շուրջ 40%-ն էական օգնություն չի ստանում ոչ մի տեղից:**

Թոշակառուների մեկ քառորդը պատասխանել է, որ ոչ մի տեսակի բարեգործական օգնություն չի ստանում, **երկու երրորդը ստանում է օգնություն “Փարոս” ծրագրի շրջանակում և մեկ երրորդը՝ նաև այլ կազմակերպություններից:** Իմիջիայոց, թոշակառուների 6,5%-ը նյութական և բարոյական աջակցություն է ստանում իրենց նախկին աշխատանքի վայրերից:

“Փարոս”-ի գործունեությունը դրական /’լավ” և “բավարար”/ է գնահատել թոշակառուների մոտ կեսը, իսկ անբավարար՝ նրանց 34,3%-ը, ընդ որում երևանցիների՝ 41,2%-ը, աղետի գոտու թոշակառուների՝ 53,9%-ը:

Թոշակառուների 20,6%-ն ակտիվորեն հետևում էր հանրապետության հասարակական, քաղաքական և տնտեսական հիմնահարցերին, ևս 24,2%-ը բացի հասարակական ակտիվությունից մտահոգված էր նաև ընտանեկան հոգսերով, իսկ մնացած 55,2%-ին հետաքրքրում էր միայն վերջինը:

Ակտիվ հետևել է հասարակական կյանքի իրադարձություններին երևանցիների 22,6%-ը, Գյումրեցիների և Վանաձորցիների՝ 28,8%-ը, տղամարդկանց՝ 27,9%-ը, բարձր կրթական ցենզով թոշակառուների՝ 29,9%-ը:

Թոշակառուների մոտ մեկ քառորդը չի շփվում մերձավորների, բարեկամների, հարևանների հետ, ընդ որում ընկերների հետ չի շփվում նրանց 45%-ը: Նրանց շուրջ 80%-ը չի պահպանել կապերը նախկին աշխատանքային կոլեկտիվների հետ:

Դժգոհ են եղել և անբավարար են գնահատել վերաբերմունքն իրենց նկատմամբ.

պետության կողմից՝ թոշակառուների 77,1%-ը,

հասարակության կողմից՝ 43%-ը,

մերձավորների և հարազատների կողմից՝ 11,5%-ը,

զավակների կողմից՝ 11,6%-ը:

Ամենացավոտ **հոգեբանական պրոբլեմներն են համարել ծերության անպաշտպանվածությունը / թոշակառուների 28,6%/, հարազատների և մերձավորների հետ հարաբերությունների պակասը /27,2%/, ուրիշներից կախվածությունը / 25,5%/: Այն հարցին, թե ով պետք է գլխավորապես հոգ տանի թոշակառուների /ծերերի/ մասին, պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.**

պետությունը - 60,2%,

սեփական զավակները - 19,4%,

յուրաքանչյուրը պարտավոր է ապահովել իր ծերությունը - 10,9%,

բարեգործական կազմակերպությունները - 5,8%,

դժվարացել են պատասխանել - 3,7%

Հետաքրքրական է, որ պետության օգնությանը հիմնականում ապավինել են երևանցի թոշակառուները, այն դեպքում, երբ Գյումրիում և Վանաձորում նրանք ավելի մեծ պահանջներ են ներկայացնում զավակներին և իրենք իրենց /տարածաշրջանի թոշակառուների կեսից ավելին/: Միայնակ թոշակառուները բնականորեն կողմնորոշված են դեպի պետության և բարեգործության դերի կարևորմանը:

Աղբյուր՝ ՀՀ Վիճվարչության կենսաթոշակառուների հետազոտություն, 1997թ., մարտ:

Ներդիր 17. Քաղաքացիական կենսաթոշակատուների հետազոտություն:

1997թ. հունվար-մարտին ՀՀ Վիճվարչությունը, գիտնականների և մասնագետների ներգրավմամբ և ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի (UNDP) ֆինանսական աջակցությամբ, ձեռնարկեց քաղաքացիական 1015 կենսաթոշակատուների /հիմնականում, տարիքային թոշակատուների/ ընտրանքային հետազոտություն: Հարցումները կազմակերպվեցին մայրաքաղաքում և հանրապետության 10 մեծ /Գյումրի, Վանաձոր, Հրազդան/, միջին /Կապան, Սևան, Իջևան, Արմավիր, Արարատ/ և փոքր /Աշտարակ, Վայք/ քաղաքներում:

Ընտրանքը կազմեց գլխավոր համակցության 1,7%-ը: Քաղաքներն ընտրվեցին կենսաթոշակատուների տեսակարար կշռի չափանիշով, թոշակատուներն՝ ըստ բնակության վայրի /հասցեների/ պատահական ընտրությամբ:

Ընտրանքում ընդգրկված թոշակատուների **ժողովրդագրական-սոցիալական բնութագիրը** բերվում է ստորև.

Ընտանեկան վիճակը	Սեռը		Կրթությունը					Ընդամենը
	տղամ.	կին	ոչ լրիվ միջն.	միջ- նա- կարգ	միջն. մաս- նագ.	բարձր. և թերի բարձր.	գիտա- կան աստիճան	
Թոշակատուն ապրում է.								
-որդու ընտանիքի հետ	14.2	29.2	12.6	12.8	7.4	10.4	0.2	43.4
-աղջկա ընտանիքի հետ	2.3	6.5	1.7	3	1.5	2.6	-	8.8
-ամուսնու (կնոջ) հետ	11.7	10.6	5	5.2	4.9	7.1	0.1	22.3
-միայնակ	2.3	14.9	5.9	4.6	3.3	3.3	0.1	17.2
-այլ	2.7	5.6	1.7	2.3	1	3.2	0.1	8.3
Ընդամենը	33.2	66.8	26.9	27.9	18.1	26.6	0.5	100


Հետազոտված թոշակատուների 41,4%-ը մինչև 64 տարեկան էին, 27,4%-ը՝ 65-69 տարեկան, 20,4%-ը՝ 70-74 տարեկան, իսկ 10,8%-ը՝ 75 տարեկանից բարձր: Նրանց 79,8%-ը պետական սոցիալական ապահովման համակարգից ստանում էր միայն աշխատանքային /տարիքային/ թոշակ, 7,9%՝ նաև սոցիալական, 10,9%՝ հաշմանդամության և մնացածը՝ այլ տեսակի թոշակներ:

Թոշակատուների 73,6%-ն ունեն 30-50 տարվա աշխատանքային ստաժ, 18,5%-ը՝ 10-ից մինչև 30 և միայն 1,5%-ը՝ մինչև 10 տարվա ստաժ: Նրանց 6,4%-ն առհասարակ ստաժ չունեին:

Ուսումնասիրված **թոշակատուների միջին աշխատանքային ստաժը կազմում էր 36.5 տարի**, ընդ որում կանանցը՝ 34,0 տարի, տղամարդկանցը՝ 38,6 տարի:

Կենսաթոշակատուների նյութական վիճակն առաջին հերթին բնութագրվում է թոշակի ամսական չափով, որի բաշխման պատկերը հետևյալն է.

Թոշակատուների բաշխումն ըստ թոշակի ամսական չափի (%-ով ամբողջի մեջ)



Ինչպես հետևում է բերված տվյալներից, **թոշակատուների 78%-ից ավելին ստանում էր մինչև 3 500 դրամ թոշակ**: Հաշվարկները ցույց են տալիս, որ ուսումնասիրված ժամանակահատվածում ընտրանքում ընդգրկված թոշակատուների **միջին ամսական թոշակը կազմել է 3 239 դրամ, կամ մոտ \$7**:

Կենսաթոշակների չափերն, անշուշտ, չեն կարող բավարարել թոշակատուների գեթ սննդի կարիքները: Ուստի բնական է այն փաստը, որ ուսումնասիրված **թոշակատուների 93,7% կարիք ուներ լրացուցիչ նյութական օգնության**: Կարիքավորության գործակիցն ավելի բարձր էր միայնակ թոշակատուների մոտ:

Թոշակառուների թաշխումն ըստ կարիքի տեսակի ու ընտանեկան վիճակի							
Օգնության տեսակը	Ընտանեկան վիճակը						Միջինը
	ընտանիքում ապրող		միայնակ ապրող		այլ		
	ընդամուրի մեջ	տվյալ խմբում	ընդհանուրի մեջ	տվյալ խմբում	ընդհանուրի մեջ	տվյալ խմբում	
Կարիք ունեն. աննդի	23.33	31.83	6.96	38.44	3.24	37.58	33.53
.հագուստի	8.53	11.63	2.77	15.32	1.41	16.36	12.71
առողջապահության, դեղորայքի	14.96	20.42	2.72	15.03	1.31	15.15	18.99
կոմունալ ծառայությունների /ջուր, ջեռուցում և այլն/ առօրյա խնամակալության	11.45	15.63	2.04	11.27	1.52	17.58	15.01
բարոյական աջակցության այլ	2.78	3.78	1.41	7.8	0.26	3.03	4.45
օգնության կարիք չունի	4.69	6.43	1.78	9.82	0.21	2.42	6.69
	1.77	2.43	0.21	1.16	0.36	4.24	2.33
	5.76	7.85	0.21	1.16	0.31	3.64	6.28
Ընդամենը /տողեր 1-8/	73.27	100	18.1	100	8.63	100	100
Ընդամենը օգնության կարիք ունեն /տող. 1-7/ Կարիքավորության գործակիցն ըստ ընտանեկան վիճակի*	67.51	92.15	17.89	98.84	8.32	96.36	93.72
	0.91	0.921	1.04	0.988	1	0.964	0.94

*** Հաշվարկված է որպես օգնության կարիք ունեցողների տվյալ խմբի տեսակարար կշռի հարաբերությունը թոշակառուների տվյալ խմբի տեսակարար կշռի նկատմամբ:**

Ամենամեծ կարիքը թոշակառուները զգում են աննդի գծով՝ 33,5%, թոշակառուների մոտ 19%-ը նշել են կոմունալ ծախսերի կարիքը, 15%-ը դեղորայքի և առողջապահության ծախսերի գծով հոգ տանելու կարիքը:

Աննդի կարիք ամենից ավելի ունեն միայնակ թոշակառուները (նրանց 38.4%), դեղորայքի և առողջապահական ծառայությունների կարիք ունեն ընտանիքում ապրողների ավելի քան 20%-ը, կոմունալ ծառայությունների կարիք՝ այլ ընտանեկան կարգավիճակով ապրող /բարեկամների, ծանոթների, հարևանների, ընկերների հետ / թոշակառուները՝ տվյալ խմբի 17,6%:

Թոշակառուների 30,3% շարունակում է աշխատել: Աշխատող թոշակառուների 74% ունի մշտական աշխատանք պետական կամ մասնավոր ոլորտում, 12%՝ ինքնուրույն և կանոնավոր զբաղվում է առևտրով և ևս 14% ժամանակ առ ժամանակ կատարում է վճարովի աշխատանքներ:

Աշխատող թոշակառուները հարաբերականորեն ավելի շատ են տղամարդկանց, քան կանանց մեջ /համապատասխանաբար՝ 36,2% և 27.5%/, միայնակների և թոշակառու զույգերի քան ընտանիքներում ապրող թոշակառուների մեջ /համապատասխանաբար՝ 32,5, 34,1 և 27,9%/, միջին մասնագիտական և ավելի բարձր կրթություն ունեցողների, քան դրանցից ցածր կրթական մակարդակով թոշակառուների մոտ /համապատասխանաբար՝ 39,2% և 22,3%/ :

Միաժամանակ բոլոր /զբաղված և չզբաղված/ **թոշակառուների 47,4%-ը ցանկանում էր աշխատել:** Ավելի հաճախ աշխատելու ցանկություն են հայտնել մինչև 64 տարեկան թոշակառուները /տվյալ խմբի 65%-ը/, տղամարդիկ / 60,1% / և միջին մասնագիտականից բարձր կրթությամբ թոշակառուները /54,3%/:

Չավակների ընտանիքներում ապրող թոշակառուների 76,2%-ն ակտիվորեն մասնակցում էր ընտանիքի բարեկեցության ապահովման գործին: Մասնավորապես, 42,2%-ը պատրաստում է ճաշը, հավաքում բնակարանը, 29,3%-ը լվացք է անում ամբողջ ընտանիքի համար, 20,9%-ը գնումներ է կատարում, 4,5%-ը զբաղվում է թոռների դաստիարակությամբ, իսկ մոտ 24%-ը հայտնել է, որ առողջությունը թույլ չի տալիս ակտիվ մասնակցություն ունենալ տնային հոգսերի լուծմանը:

Ըստ հարցման արդյունքների թոշակառուները միջին հաշվով համարում են թոշակի անցնելու նպատակահարմար տարիքը տղամարդկանց համար՝ 59 տարեկանից, կանանց համար՝ 53 տարեկանից: Եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ թոշակառուների մոտ կեսը դեռևս ցանկանում է աշխատել ապա կարելի է եզրակացնել, որ թոշակի անցնելու հանգամանքը նրանց կողմից դիտվում է որպես եկամտի ևս մեկ աղբյուրի հնարավորություն, այլ ոչ թե “պատվավոր հանգստի” անցնելու իրավունք:

Աղբյուր՝ ՀՀ Վիճվարչության քաղաքաբնակ կենսաթոշակառուների հետազոտություն, 1997թ., մարտ:

5.4 Բավարար կրթական մակարդակ չունեցող անձիք: Հետազոտության արդյունքները վկայում են, որ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության առկայությունը հնարավորություն է տալիս խուսափել աղքատությունից, քանի որ կրթությունը լուրջ գրավական է թե՛ աշխատանքի շուկայում մրցունակ լինելու և թե՛ համեմատաբար բարձր աշխատավարձ ստանալու համար:

Ուստի պատահական չէ, որ բարձրագույն կրթություն ունեցողների 53.9%-ը աղքատ չեն, կրթական մակարդակի պակասելուն զուգընթաց ոչ աղքատների բաժինն իջնում է մինչև 41,5%, որը միջին հանրապետականից (45.3%) ցածր է:

Կրթական մակարդակի ազդեցությունն աղքատության բաշխման վրա ներկայացված է ստորև.

Աղյուսակ 22. Աղքատների բաշխումն ըստ կրթական մակարդակի

	Կրթական մակարդակը							
	Բարձրագույն		Միջնակարգ մասնագիտական		Ընդհանուր միջնակարգ		Տարրական և ցածր	
Ոչ աղքատներ	1407	53.9%	1682	48.0%	2469	43.1%	445	41.5%
Աղքատներ	647	24.8%	954	27.2%	1547	27.0%	312	29.1%
Շատ աղքատներ	558	21.4%	870	24.8%	1716	29.9%	314	29.3%
ԸՆԴԱՄԵՆԸ	2612	100.0%	3506	100.0%	5732	100.0%	1071	100.0%

Ըստ հետազոտության արդյունքների, հարցված բնակչության ընդգրկվածությունը միջնակարգ կրթությամբ տարիքային տարբեր խմբերում (7-11, 12-14, 15-16 տարեկան) գրեթե նույն մակարդակի վրա է՝ անկախ ընտանիքի նյութական վիճակից: Նկատվում է որոշակի տարբերակում միջնակարգ դպրոցի բարձր դասարանցիների մոտ. շատ աղքատ ընտանիքների երեխաների հաճախելիությունը որոշակիորեն ցածր է մնացած խմբերի համեմատ, ընդ որում տղաներն ավելի հաճախ են թողնում դպրոցը, քան աղջիկները: Դա պայմանավորված է հատուկ կամ մասնագիտական կրթություն ստանալու ձգտումով, կամ ընտանիքի նյութական վիճակը բարելավելու նպատակով աշխատանքի տեղավորվելու անհրաժեշտությամբ:

Եթե ընդհանուր միջնակարգ կրթություն կարող են ստանալ համարյա բոլոր երեխաները, ապա բարձրագույն կրթությունը հասանելի է ավելի ապահովված ընտանիքների երեխաներին: Շատ աղքատ ընտանիքների երեխաները 1.8 անգամ պակաս են համալրում ԲՈՒՀ-երում սովորողների շարքերը, քան ոչ աղքատ ընտանիքների (տես՝ աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Ուսումնական հաստատությունների հաճախելիությունն ըստ աղքատության հայտանիշի

	Ուսումնական հաստատություններ հաճախողների քանակը, %				
	7-11 տարեկան	12-14 տարեկան	15-16 տարեկան	17-25 տարեկան	Ընդամենը
Ոչ աղքատներ	98	99	91	29	70
Աղքատներ	97	100	93	22	71
Շատ աղքատներ	97	97	88	16	67
Միջինը	97	99	91	24	69

Ոչ աղքատ ընտանիքներն ավելի շատ են ծախսել կրթության վրա, քան աղքատ և շատ աղքատ ընտանիքները, իսկ մասնավոր դասերը հիմնականում

մատչելի են եղել ոչ աղքատ ընտանիքների երեխաներին: Կրթական աստիճանի բարձրացմանը զուգահեռ կրթավճարի ավելի արագ աճը կանխորոշել է կրթության վրա ծախսերի խորացող խզումը ըստ աղքատության խմբերի: Եթե տարրական դասարանների մեկ երեխայի վրա կատարված ծախսերը ոչ աղքատ ընտանիքներում գերազանցում էին նման ծախսերը շատ աղքատ ընտանիքներում 4-5 անգամ, ապա ԲՈՒՀ-երում սովորողների համար ծախսերի խզումը կազմում էր 13 անգամ(տես՝ աղյուսակ 24):

Աղյուսակ 24. Կրթության միջին ծախսերն ըստ կրթության մակարդակի և աղքատության հայտանիշի

	Մեկ երեխայի վրա կատարված ծախսերը, դրամ			
	Տարրական դպրոց	Միջնակարգ դպրոց	Մասնավոր դասեր	ԲՈՒՀ եր
Ոչ աղքատներ	2758	3492	4130	34932
Աղքատներ	1227	1465	1287	2387
Շատ աղքատներ	759	732	2021	2642
Միջինը	2009	2340	3397	28929

6.Սոցիալական ծառայությունների վիճակը

6.1.Ժողովրդագրական իրավիճակն անցումային ժամանակաշրջանում:

Անցումային ժամանակաշրջանին ուղեկցող տնտեսական ճգնաժամը բացասական ազդեցություն ունեցավ հանրապետության հիմնական ժողովրդագրական ցուցանիշների վրա:

Ամուսնության գործակիցը 1991-1996 թթ. նվազել էր գրեթե 2 անգամ:

Ծնելիության գործակիցը հազար մարդու հաշվով նշված ժամանակաշրջանում 21.6-ից դարձել էր 12.8, այսինքն նվազել էր 1.7 անգամ: Ծնելիության մակարդակը հանրապետությունում չէր ապահովել բնակչության ընդլայնված վերարտադրություն: 1994-1995թթ. **բնակչության վերարտադրության նետտո գործակիցը** հանրապետության ամբողջ բնակչության համար կազմել էր 0.768, քաղաքային բնակչության համար՝ 0.688, իսկ գյուղականին՝ 0.953: Երկար տարիներ հանրապետության բնակչության ընդլայնված վերարտադրությունն ապահովվում էր գյուղական բնակչության հաշվին: Սակայն, նույնիսկ գյուղում չկար բնակչության ընդլայնված վերարտադրություն:

Բնականաբար, ընկել էր նաև **կանանց պտղաբերության գործակիցը**: 1995-1996թթ. այն կազմել էր 1.598, ընդ որում, քաղաքաբնակ կանանց համար՝ 1.434, իսկ գյուղաբնակ կանանց համար՝ 1.960:

Ընդհանուր մահացության գործակիցը 1991-1993թթ. աճել էր: 1993 թվականին մահացության գործակիցը հասել էր իր բարձրագույն նիշին, իսկ 1994-1996թթ. դիտվեց վերջինիս անկում ու կայունացում:

Մահացության տեսակետից ամենախոցելի խումբը աշխատունակ տարիքի տղամարդիկ են, որոնք կազմում էին մահացած տղամարդկանց ընդհանուր թվի մոտ 1/3-ը: Նրանց մահացության հիմնական պատճառներն էին՝ արյան շրջանառության համակարգի հիվանդությունները, դժբախտ պատահարները, նորագոյացությունները, մարսողական ու շնչառական օրգանների հիվանդությունները: 1991-1995թթ., որպես լարված սոցիալ-տնտեսական իրավիճակի հետևանք, կայուն տեմպերով աճում էր ինքնասպանությունների քանակը (100 հազար տղամարդու հաշվով 4.3-ից մինչև 7.2):

Բյուջետային սահմանափակումներն առաջ բերեցին ֆինանսական, նյութական ու տեխնիկական ռեսուրսների սուր պակաս, որն անդրադարձավ առողջապահական հիմնարկությունների գործունեության վրա: Դիտվում էր “աղքատության” տարբեր հիվանդությունների վերածնունդ: 1991-1996թթ. աշխատունակ տարիքի տղամարդկանց շրջանում մահացությունը վարակիչ ու մակաբուծային հիվանդություններից աճել էր 1.3 անգամ: Աշխատունակ տարիքի տղամարդկանց մահացությունը հոգեկան խանգարումների պատճառով աճել էր 1.8 անգամ:

Միևնույն ժամանակ կյանքի սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացման պարագայում, **մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը** կրճատվել էր: Մանկամահացության հիմնական պատճառներն էին՝ շնչառական օրգանների հիվանդությունները, վարակիչ ու մակաբուծային հիվանդությունները:

Հնարավոր է, որ մանկամահացության գործակցի նվազման վրա ազդել է ոչ լրիվ վիճակագրական հաշվառումը: Միայն 1996թ. է դիտվել մանկամահացության աճ՝ նախորդ տարվա համեմատ: Հարկ է նշել, որ 1000 նորածնի հաշվով աճել էր 2.5 կիլոգրամից պակաս քաշով ծնված երեխաների թվաքանակը (74.7 1996թ-ին՝ 1991թ-ի 66.9 -ի դիմաց): Աճում է նաև հաշմանդամ երեխաների թվաքանակը. 1991-1996թթ. այն աճել էր 1.5 անգամ (7048՝ 4859-ի դիմաց):

Անցումային ժամանակաշրջանում կարևորվում են մի շարք հիմնահարցեր, որոնք սերտորեն կապված են աղքատության և սոցիալական գրկանքների հետ: Բնակչության

կենսամակարդակի ցուցիչներից է այնպիսի սոցիալական ծառայությունների հասանելիությունը, ինչպիսիք են՝ առողջապահությունը, կրթությունը, բնակարանային պայմանները և բնակարանային ֆոնդի բարեկարգվածությունը:

6.2 **Առողջապահություն:** Պաշտոնական վիճակագրության տվյալներով 1990-1994թթ. բնակչության հիվանդացության ընդհանուր գործակիցն անշեղորեն ընկնում էր: Եթե 1989թ. 100 հազար բնակչի հաշվով գրանցված էր 35702.6 հիվանդ, որոնց ախտորոշումը կատարված էր առաջին անգամ, ապա 1994թ. - ընդամենը 18851.4: 1994 թվականից այդ ցուցանիշը սկսեց աճել և 1996թ. կազմում էր 21081.0, կամ 1989թ-ի մակարդակի 59%-ը:

Հիվանդացության աճի տեմպը 1996թ.-ին նախորդ տարվա համեմատ կազմել է 6,4%: Սակայն, հիվանդությունների որոշ խմբերի համար հիվանդացության աճի տեմպը գերազանցում էր միջին հանրապետական ցուցանիշը: Այսպես, վարակիչ և մակարուծային հիվանդություններով հիվանդացությունն աճել էր 38,1%-ով, մարտդակային համակարգի հիվանդություններով՝ 35,1%-ով, հղիության, ծննդաբերության ու հետծննդյան շրջանի բարդություններինը՝ 29,9%-ով, հոգեկան խանգարումներով՝ 12,1%-ով:

Ստորև բերված աղյուսակը նկարագրում է բնակչության հիվանդացությունն ըստ կյանքում առաջին անգամ ախտորոշված հիվանդությունների խմբերի (100 հազար մարդու հաշվով).

Աղյուսակ 25.

	1989	1990	1993	1995	1996
Գրանցված հիվանդներ	35702.6	34724.5	21643.3	19804.5	21081.0
այդ թվում՝					
շնչառական օրգանների հիվանդություններով	17713.7	15445.5	9044.2	8912.2	9229.0
վնասվածքներով և թունավորումներով	4670.3	4890.9	3903.1	3094.5	2930.6
մարտդակային օրգանների հիվանդություններով	4231.2	3625.5	2362.4	1308.9	1768.7
արյան շրջանառության օրգանների հիվանդություններով	973.6	949.1	595.3	538.7	544.2
միզասեռական օրգանների հիվանդություններով	915.8	884.3	654.4	664.2	680.3
վարակիչ և մակարուծային հիվանդություններով	1796.2	1592.3	1138.7	1312.2	1812.0
նյարդային համակարգի և զգայական օրգանների հիվանդություններով	1872.8	2118.1	1262.0	1348.5	1293.4
հղիության, ծննդաբերության ու հետծննդյան շրջանի բարդություններով *	1687.4	1904.7	1294.3	951.0	1235.8
նորագոյացություններով	163.6	158.6	126.2	131.0	131.2
հոգեկան խանգարումներով	213.5	304.6	158.3	156.5	175.4

* - ցուցանիշները հաշվարկված են ըստ կանանց թվաքանակի

Հիվանդացության գործակցի անկման միտումը բնակչության կողմից առողջապահական հաստատություններ անհամեմատ քիչ հաճախելու հետևանք է, բնակչությունը դրանց օգնությանն էր դիմում միայն ամենաձայրահեղ ու անհետաձգելի դեպքերում: Հիվանդացության անկումը մինչև 1996 թվականը չի նշանակում, որ բնակչության առողջական վիճակը բարելավվել է: Այդ մասին են վկայում բնակչության մահացության տվյալները: Եթե 1989թ. սկսած բնակչության հիվանդացության ցուցանիշն ընկնում էր, ապա մահացության ցուցանիշն անշեղորեն աճում էր մինչև 1994 թ.-ը, իսկ հետո կայունանում է (տես աղ.26):

Աղյուսակ 26. Բնակչության մահացության գործակիցը (100 հազար մարդու հաշվով)

1989	1990	1991	1992	1993	1994	1995	1996
598.9	620.4	648.6	700.7	736.9	657.9	660.7	660.8

Առողջապահության հիմնախնդիրների հատուկ հետազոտության արդյունքներով (978 տնային տնտեսություններ, 3498 անդամներ) 1996 թվականի 12 ամիսների ընթացքում հավասարապես հիվանդացել են թե՛ ունևորները, թե՛ աղքատները: Առողջության հետ կապված լուրջ պրոբլեմների պատճառների մեջ հարցվածները նշել էին՝ վատ սնունդը (36%), ծանր ընտանեկան դրությունը (23%), տարիքը (14%), մասնագիտական հիվանդությունները և էկոլոգիան (յուրաքանչյուրը համարյա 9%), սննդային թունավորումները (3%): Սակայն, հիվանդացածների միայն շուրջ կեսն էր դիմել բժշկի: Բժշկական օգնության չդիմելու հիմնական պատճառը բժշկական ծառայությունների թանկությունն էր : Հիվանդանալիս աղքատներն ավելի հազվադեպ էին դիմել բժշկի և հիմնականում զբաղվել էին ինքնաբուժմամբ:

Աղյուսակ 27. 1996թ. հիվանդացած, բուժհիմնարկներ դիմած և բուժման համար ծախսեր կատարած բնակչության բաշխումն ըստ աղքատության հայտանիշի

	1996թ. ընթացքում հիվանդացածների թիվը				Բուժման համար դիմածների թիվը	Առողջապահության վրա ծախսեր կատարածների թիվը
	Ընդամենը	Այդ թվում				
		Կանայք	Մինչև 5տարեկան երեխաներ	6-ից 14 տարեկան երեխաներ		
Ոչ աղքատներ	38.9%	53.8%	8.8%	13.7%	44.9%	39.4%
Աղքատներ	32.0%	52.7%	8.7%	21.4%	37.0%	27.7%
Շատ աղքատներ	32.3%	52.1%	12.7%	16.0%	29.0%	22.5%
Ընդամենը	35.6%	53.2%	9.7%	15.9%	39.6%	33.0%

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ բնակչությունը նախընտրում է օգտվել հիմնականում անվճար բժշկական հաստատություններից (69%)՝ չկարողանալով, այնուամենայնիվ, խուսափել վճարովի բուժհիմնարկների ծառայությունից (24%):

Չնայած վճարովի բուժօժանդություններից օգտվելը հատուկ է աղքատության երեք խմբերին էլ, միևնույն ժամանակ ոչ աղքատները 2 անգամ ավելի հաճախ են դիմել վճարովի բուժհիմնարկներին, քան շատ աղքատները:

Հետազոտված բնակչության բուժման և ախտորոշման ծախսերի հիմնական աղբյուրներն էին՝ ընթացիկ եկամուտները (31%), անձնական սեփականության վաճառքը (28%), օգնությունը հարազատներից (17%) և խնայողությունները (11%): Բնակչության բոլոր խմբերը հիվանդանալիս ստիպված են եղել արժեքավոր իրեր վաճառել, ինչպես նաև հարազատներից օգնություն ստանալ:

Առողջապահության վրա ծախսեր կատարած բնակչության ընդհանուր թվում գերակշռում են ոչ աղքատները: Նրանց ծախսերն առողջապահության վրա մեկ շնչի հաշվով մի քանի անգամ գերազանցել են համապատասխան միջին ցուցանիշը (տես՝ աղյուսակ 28,29):

Աղյուսակ 28. Առողջապահության ծախսեր կատարած բնակչության բաշխումն ըստ աղքատության խմբերի

տոկոսներով

Բնակչության խումբը	Առողջապահության վրա կատարած ծախսերի մասին հայտնած բնակչության մասը				
	Ախտորոշում	Բուժում հիվանդանոցում	Այցատաննաբույժին	Հղիություն և ծննդաբերություն	Այլ ծառայություններ
Ոչ աղքատներ	5.6	11.0	9.4	1.9	2.9
Աղքատներ	2.3	5.0	5.3	1.3	2.6
Շատ աղքատներ	1.1	2.7	4.8	0.6	0.7
Ընդամենը	3.4	7.1	7.0	1.4	2.2

Աղյուսակ 29. Առողջապահության միջին ծախսերն ըստ բնակչության աղքատության հայտանիշի

դրամներով

Բնակչության խումբը	Բնակչության մեկ շնչին ընկնող միջին ծախսն առողջապահության վրա					
	Ախտորոշում	Բուժում հիվանդանոցում	Այցատաննաբույժին	Հղիություն և ծննդաբերություն	Այլ ծառայություններ	Ընդամենը
Ոչ աղքատներ	2222	13297	1336	5558	1563	23976
Աղքատներ	889	1347	443	729	780	4188
Շատ աղքատներ	430	824	313	869	354	2790
Ընդամենը	1663	8323	841	3146	1097	17806

6.3 Կրթության ծառայություններ:

Նախադպրոցական կրթություն: 1989-1996թթ. նախադպրոցական հաստատությունների թիվը կրճատվել է 22.3%-ով և 1996թ. վերջին կազմել է 1037: 1996թ. նախադպրոցական հաստատություններում եղած 100 տեղի համար կար 57 երեխա, մինչդեռ 1989թ. երեխաների թվաքանակը մի փոքր գերազանցում էր տեղերի քանակը (100.1): Ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում նվազել է 27.8%-ից /1989 թ./ մինչև 15.7% /1996թ./:

Ստորև բերված տվյալները բնութագրում են նախադպրոցական կրթության պետական համակարգը.

Աղյուսակ 30.

	1989	1990	1993	1995	1996
Մսուրներ	1	3	3	1	1
դրանցում երեխաներ	49	92	99	40	30
Մանկապարտեզներ	1334	1192	1216	1080	1037
դրանցում երեխաներ	146467	142801	103957	71244	72806
100 տեղի հաշվով երեխաների թվաքանակը	100.2	95.8	71.4	55.5	57.5

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդգրկվածության նվազումը բացատրվում է մի քանի գործոններով.

1. ըստ գործող օրենսդրության մայրերը, մինչև երեխայի 3 տարեկան դառնալը կարող են գտնվել հետծննդյան արձակուրդի մեջ,
2. կանանց շրջանում գործազրկության բարձր մակարդակը,
3. մանկապարտեզներում պայմանների վատացումը և վարձավճարի աճը:

Հայաստանի բոլոր մարզերի 54 մանկապարտեզների հետազոտության /նոյեմբեր, 1996թ./ արդյունքները ցույց տվեցին, որ երեխաներին մանկապարտեզ չբերելու հիմնական պատճառը ծնողների վճարունակ չլինելն է /45%/, մանկապարտեզներում վատ սնունդը /12,5%/ և ոչ նորմալ ջեռուցումը /20%/:

Հետազոտված մանկապարտեզների տնօրենների կարծիքով հաճախող երեխաների 51,1% միջին տնտեսական հնարավորություններով ընտանիքներից են, 11.1%՝ հարուստ և ունևոր , 37,8%՝ աղքատ և չբավոր:

Պարտադիր միջնակարգ կրթություն: Խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանը մեծ նվաճումներ ունեցավ կրթության ոլորտում: Բնակչության կրթական մակարդակը տարեցտարի աճում էր:

1989թ. մարդահամարի տվյալներով 15 և ավելի տարիք ունեցող 1000 մարդուց 901-ը ուներ բարձրագույն և միջնակարգ կրթություն, ընդ որում, դրանցից 138-ն ուներ բարձրագույն կրթություն, 179-ը՝ միջնակարգ մասնագիտական, 23-ը՝ թերի բարձրագույն, 375-ը՝ ընդհանուր միջնակարգ, 186-ը՝ թերի միջնակարգ: Խորհրդային Միության նախկին հանրապետությունների մեջ Հայաստանը կրթվածությամբ (բարձրագույն և միջնակարգ կրթություն) զբաղեցնում էր առաջին տեղը:

Սակայն 1989-1996թթ. ընթացքում նկատվեց 7-24 տարեկան հասակի բնակչության ուսումնական հաստատություններում ընդգրկվածության նվազելու միտում /տես՝ աղյուսակը/

Աղյուսակ 31.

	1989	1990	1993	1995	1996
7-24 տարեկան հասակի բնակչության ընդգրկվածությունը ուսումնական հաստատություններում,%	66.0	65.4	57.4	53.6	54.2

Կրթության ոլորտում եղած նվաճումների որոշակի մասը պահպանված է նաև այժմ: Հանրապետությունում գործում է համընդհանուր պարտադիր միջնակարգ կրթության մասին օրենքը: Միևնույն ժամանակ, երեխաների ընդգրկվածությունը միջնակարգ կրթական համակարգում տարեցտարի պակասում է:

Սակայն, տնտեսական ճգնաժամը սրեց դպրոցական պրոբլեմները՝ դպրոցի տեխնիկական պայմանները (ջեռուցում, վերանորոգում, մեթոդական և գույքային ապահովվածություն, տաք սնունդ և այլն), դպրոցի հետ կապված ծախսերը (դպրոցական հագուստ, գրեմական պիտույքներ, դասագրքեր և այլն), ուսուցիչների աշխատավարձը :

Դպրոցական կրթության պետական համակարգը 1996-1997 ուսումնական տարում սպասարկվում էր 61.1 հազ. ուսուցիչների կողմից: Դպրոցները հիմնականում ապահովված էին անհրաժեշտ ուսուցիչներով: 1996թ. ուսուցչի ամսական դրույքաչափը կազմում էր 3760 դրամ, որն աղքատության պարենային գծի մոտ կեսն է: Նման ցածր վարձատրության պայմաններում չէր կարող լինել բարձր պահանջներ դասավանդման որակի նկատմամբ:

Ուսուցիչների վաստակի լրացուցիչ աղբյուրը որոշակի վարձատրությամբ արտաժամյա պարապմունքներն են : Հիմնականում այդպիսի պարապմունքներն անց են կացվել մաթեմատիկա, օտար լեզու, համակարգչային հիմունքներ առարկաներից: Արտաժամյա պարապմունքներն անց են կացվում որոշակի վարձատրությամբ, որի չափը տատանվել է ամսական 1000-ից մինչև 20000 դրամ: Հարցված ընտանիքներում երեխաների 78%-ը չի հաճախել լրացուցիչ պարապմունքների՝ դրանց թանկության պատճառով:

Վատացել է աշակերտների ապահովվածությունը դասագրքերով: Երեխաների միայն 1/3-ն ուներ անհրաժեշտ դասագրքերը: Դասագրքերի պակասության հիմնական պատճառը (հարցվածների 72%) դրանց թանկությունն էր: Հարցվածների 28%-ն ունեին դասագրքերը ճարելու դժվարություններ: Անհրաժեշտ դասագրքերը չունենալու պատճառով դպրոցականների 87%-ն օգտվում էին

համադասարանցիների դասագրքերից: Այս հանգամանքը լրացուցիչ դժվարություններ էր առաջացնում ուսման գործընթացում: Դասագրքեր չունեցողների մոտ 10%-ը բոլորովին դաս չէր սովորում:

Քարձրագույն կրթության համակարգի մատչելիությունը: 1996 թվականին բարձրագույն կրթություն կարելի էր ստանալ 15 պետական և 75 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: 1996թ. ոչ պետական ԲՈՒՀ-ում սովորելու տարեկան վարձի միջին չափը տատանվում էր 150-ից մինչև 500 ԱՄՆ դոլարի սահմաններում: 1996թ. բոլոր ԲՈՒՀ-երում սովորող ուսանողների թվաքանակը կազմում էր 53.8 հազար մարդ՝ 1989թ. 65.4 հազարի դիմաց:

1989 թվականին Հայաստանում գործող բոլոր ԲՈՒՀ-երը պետական էին: 1996թ. պետական ԲՈՒՀ-երում սովորող ուսանողների թվաքանակը կազմում էր 35.5 հազար , ինչը 1.8 անգամ պակաս էր, քան 1989թ: 1996թ. պետական ԲՈՒՀ-եր ընդունված ուսանողների թիվը 1989 թ. համեմատ նվազել է 1.6 անգամ և կազմել է 8179 մարդ: Անհրաժեշտ է նշել, որ պետական ԲՈՒՀ-ում իրականացվում է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի ուսուցում: 1996թ. պետական ԲՈՒՀ-եր ընդունված ուսանողների 56%-ը վճարովի ուսուցման ուսանողներ էին: Նախորդ տարվա համեմատ նրանց թվաքանակը աճել էր 23%-ով:

Վճարովի բարձրագույն կրթություն ստացող ուսանողների տեսակարար կշռի աճը պայմանավորված է այդպիսի ուսանողական տեղերի առաջանցիկ ավելացմամբ: Նշանակում է, կարիքավոր ընտանիքների երեխաների բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները պակասում են:

ԲՈՒՀերի շրջանավարտներն ինքնուրույն են աշխատանք փնտրում: Սա մեծ դժվարություններ է առաջացնում, քանի որ աշխատուժի շուկայում բավականին մեծ է բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկ մասնագետների տեսակարար կշիռը: Հաճախ ԲՈՒՀ-երի շրջանավարտներն աշխատանքի են տեղավորվում ոչ ըստ իրենց ստացած մասնագիտության:

6.4 Բնակչության ապահովվածությունը բնակարաններով:

Հանրապետությունում բնակարանային հարցը միշտ հրատապ է եղել: Աղետալի երկրաշարժից և աղբբեջանաբնակ հայերի ներգաղթից հետո բնակարանային խնդիրն էլ ավելի սրվեց: Երկրաշարժից տուժածների ու փախստականների մի մասը տեղավորվեցին հյուրանոցներում, հանգստյան տներում և առողջարաններում:

1997թ. սկզբին ՀՀ քաղաքներում բնակարան ստանալու կամ այն բարելավելու համար հերթագրված էին 103.9 հազար ընտանիքներ, որոնցից 30.6 հազարը ապրում էին աղետի գոտում:

Բնակարան ստանալու համար հաշվառման կանգնած ընտանիքներից 13.2 հազարը ապրում էին հանրակացարաններում, 4.1 հազարը՝ վթարված բնակարաններում, 22.5 հազարը՝ տնակներում: 10 տարուց ավելի հերթագրված էին 21.4 հազ. ընտանիքներ, հիմնականում՝ Երևանում: Միաժամանակ, կատարվում էր պետական բնակարանների սեփականաշնորհում: 1996թ. ընթացքում սեփականաշնորհվել են 17.8 հազար բնակարաններ՝ 1.1 մլն. քառ.մետր մակերեսով:

Սեկ անդամին ընկնող բնակմակերեսն արդեն ուղիղ համեմատական էր ընտանիքի նյութական վիճակին:

Աղյուսակ 32. Տնային տնտեսությունների մեկ անդամի հաշվով բնակավայրերում ըստ աղքատության հայտանիշի

	Տնային տնտեսության մեկ անդամին ընկնող բնակավայրերը, քառ.մ.		
	Ամբողջ բնակչությունը	Քաղաքային	Գյուղական
Ոչ աղքատներ	15.87	12.67	20.06
Աղքատներ	12.34	10.32	16.48
Շատ աղքատներ	11.18	9.43	14.69
Միջինը	13.61	11.02	17.90

Տնային տնտեսությունների ընտրանքի համար հիմք է ծառայել ԲՇՏ-երից և գյուղխորհուրդներից վերցված հասցեների տվյալների բազան, որում չեն ընդգրկվել հյուրանոցներում, հանգստյան տներում, սանատորիաներում ու պանսիոնատներում բնակվող տնային տնտեսությունները: Այդ պատճառով հետագուոված բնակչության ապահովվածությունը բնակարաններով ու սեփական տներով բավականին բարձր է:

Գյուղական բնակիչների բնակարանային ապահովվածությունն ավելի բարձր է, իսկ քաղաքներում բնակակարաններն ավելի բարեկարգ են. այսպես, խմելու ջուրը քաղաքային բնակավայրերում հասանելի է 94.4%-ով, իսկ գյուղական բնակավայրերում խմելու ջուրը նվազ մասին է հասանելի և կախված է նրանց նյութական վիճակից:

Աղյուսակ 33. Խմելու ջրի հասանելիությունն ըստ բնակավայրերի և աղքատության հայտանիշի

	Ջրատար խողովակներ ունեցող տնային տնտեսությունների բաժինը (%)		
	Ամբողջ բնակչությունը	Քաղաքային	Գյուղական
Ոչ աղքատներ	88.2%	94.6%	78.7%
Աղքատներ	87.1%	93.9%	73.8%
Շատ աղքատներ	86.2%	93.8%	71.6%
Միջինը	88.1%	94.4%	78.1%

Բնակարանային-կոմունալ ծախսերի մասին տվյալները սուղ են. քաղաքային տնային տնտեսությունների միայն 1/3-ն է կատարել իր բնակարանի վարձի ծախսերը: Ինչևէ, այդ տվյալները ցույց են տալիս, որ ոչ աղքատների մեջ բնակվարձը վճարածների բաժինը մոտ 10%-ով ավելի է, քան աղքատների մեջ: Չգալիորեն ավելի շատ են էլեկտրաէներգիայի վարձը վճարած քաղաքային բնակիչները (բոլոր հետագուոված քաղաքայինների 85.7%):

Վառելիքայտի գնման ծախսերն ավելի բնորոշ են գյուղաբնակ տնային տնտեսություններին: Բոլոր դեպքերում այդ հնարավորությունը հիմնականում ունեցել են ոչ աղքատ տնային տնտեսությունները:

Ներդիր 18. Խմելու ջրի հասանելիությունը:

Տնտեսության վիճակը բացասաբար ազդեց բնակչության ջրամատակարարման վրա: 1996թ. տվյալներով բոլոր քաղաքները և գյուղական բնակչության 1/3-ից ավելին ապահովված էին ջրատար խողովակներով, բայց հանրապետության ջրատար խողովակային տնտեսությունը վիստեցնող վիճակում է ջրագծերի ֆիզիկական մաշվածության, վերանորոգման աշխատանքների ցածր մակարդակի և վատ սպասարկման պատճառով: Ջրատարի արտադրական հզորությունների օգտագործման գործակիցը կազմում էր 28%, իսկ Երևանում՝ 30%:

Բնակչությանը բաց թողնվող ջրի քանակությունը տարեցտարի նվազում է: 1990թ. համեմատ 1996թ. հանրապետությունում այն նվազել էր 16%-ով, իսկ Երևանում՝ 36%-ով:

Օրական բաց թողնվող ջրի միջին քանակը մեկ բնակչի հաշվով բավականին ցածր է սանիտարական նորմաներից: Ըստ 1996թ. տվյալների, մեկ քաղաքային բնակչի փաստացի սպառումը կազմել է 275 լիտր կամ նորմայի 61%-ը, իսկ Երևանում՝ 370 լիտր, կամ նորմայի 53%-ը:

Ոռոգման և տեխնիկական ջրի պակասը հաճախ լրացվում է խմելու ջրով, որն էլ ավելի է վատթարացնում ջրի առանց այդ էլ վատ մատակարարումը: Բացի այդ, ջրի որակը ոչ միշտ է համապատասխանում սանիտարական պահանջներին:

7. Աղքատության սուբյեկտիվ գնահատականները

Աղքատությունն ուսումնասիրելիս օբյեկտիվ գնահատականների հետ մեկտեղ չափազանց հետաքրքիր է բնակչության և նրա առանձին խմբերի կարծիքը (սուբյեկտիվ գնահատականը) այդ երևույթի չափերի վերաբերյալ: Վերջինն իրականացվել է մի քանի եղանակով.

- հետազոտված 5000 տնային տնտեսություններին առաջարկվել է գնահատել իրենց տնտեսական վիճակը՝ լավ, բավարար, ոչ այնքան լավ և վատ գնահատականներով,
- շուրջ 1000 տնային տնտեսություններում հարց է տրվել , թե իրենց կարծիքով Հայաստանում տնային տնտեսությունների քանի տոկոսն է աղքատ,
- հետազոտված կրթական հիմնարկների 334 ուսուցիչներ և 104 դպրոցի տնօրեններ նշել են իրենց ընտանիքի պատկանելությունը որոշակի սոցիալական խմբի՝ ըստ հարուստ, ունևոր, միջին, աղքատ և չքավոր դասի:

Պատասխանների վերլուծությունն հանգեցնում է աղքատության սուբյեկտիվ ընկալման հետևյալ պատկերին:

7.1. Տնային տնտեսությունների գնահատականներն իրենց իսկ տնտեսական վիճակի մասին: 4920 տնային տնտեսություններին հարց է տրվել իրենց տնտեսական վիճակի մասին՝ նախապես ձևակերպելով 5 հնարավոր պատասխաններ. “շատ լավ”, “լավ”, “նորմալ”, “ոչ շատ լավ”, “վատ”: Ստացված պատասխանները համեմատվել են իրենց իսկ աղքատության վիճակագրորեն գնահատված մակարդակի հետ: Արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 34. Իրենց տնտեսական վիճակի մասին տնային տնտեսությունների գնահատականների բաշխումն ըստ աղքատության հայտանիշի (տոկոսներով)

S/տ խմբերը աղքատության հայտանիշի	Չեն պատասխանել	Շատ լավ	Լավ	Նորմալ	Ոչ շատ լավ	Վատ	Ընդամենը ոչ շատ լավ և վատ
ՇԱՏ ԱՂՔԱՏ							
Ընդամենը	0.2	0.3	1.2	11.5	39.3	47.6	86.9
քաղաքաբնակ	0.1	0.3	0.4	9.6	36.5	53.1	89.6
գյուղաբնակ	0.2	0.2	2.7	15.2	44.6	37.0	81.6
ԱՂՔԱՏ							
Ընդամենը	0.1	0.2	1.2	17.0	45.4	36.2	81.6
քաղաքաբնակ	0.1	0.1	0.7	14.4	44.5	40.1	84.6
գյուղաբնակ	.0	0.2	2.1	22.2	47.2	28.3	75.5
ՈՉ ԱՂՔԱՏ							
Ընդամենը	.0	0.4	2.8	27.3	39.5	29.9	69.4
քաղաքաբնակ	0.1	0.4	2.7	26.3	38.7	31.9	70.6
գյուղաբնակ	.0	0.5	2.9	28.7	40.5	27.4	67.9

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, հանրապետության շատ աղքատ տնային տնտեսությունները հակված են իրենց տնտեսական վիճակը գնահատել “վատ”, իսկ աղքատներն ու ոչ աղքատները՝ “ոչ շատ լավ”, ըստ որում ոչ

աղքատների մոտ “վատ” գնահատականը 1,2 անգամ ավելի քիչ է հանդիպում, քան աղքատների:

7.2. Հարցված 1000 տնային տնտեսություններից 979-ը գնահատելով աղքատության տարածվածությունն Հայաստանում, այն համատարած (91-100%) են համարել պատասխանների 5%-ում, համարյա համատարած (71-90%)՝ 41%-ում, գերակշիռ (51-70%)՝ 35%-ում, կեսից պակաս (31-50%)՝ պատասխանների 14%-ում, իսկ մինչև 30% են նշել պատասխանողների 5%-ը:

Եթե նկատի առնենք, որ սուբյեկտիվ գնահատականները, որպես կանոն, ավելի հոռետեսական են, ապա հաշվարկների հիման վրա ստացված արդյունքները (ըստ որոնց աղքատ էր տնային տնտեսությունների 50%-ը և բնակչության 55%-ը) համապատասխանում են աղքատության տարածվածության չափերի մասին հասարակության պատկերացումներին:


Տնային տնտեսությունների կարծիքներն ըստ մարզերի նկատելիորեն շեղվում են միջին հանրապետականից և միմյանցից (տես աղյուսակը):

Աղյուսակ 35.Տնային տնտեսությունների աղքատության սուբյեկտիվ գնահատականը՝ ըստ մարզերի

Մարզեր	Աղքատ ընտանիքների տես. կշիռը 51%-ից ավելի գնահատած S/տ բաժինը (%-ը ամբողջի մեջ)			
	ընդամենը	51-70%	71-90%	91-100%
		տես.կշիռը մարզում հարցված տ/տ մեջ	տես.կշիռը մարզում հարցված տ/տ մեջ	տես.կշիռը մարզում հարցված տ/տ մեջ
Արագածոտն	79.10%	44.2%	34.9%	.0%
Արարատ	86.50%	24.7%	51.9%	9.9%
Արմավիր	53.10%	29.6%	19.8%	3.7%
Գեղարքունիք	91.70%	36.7%	40.0%	15.0%
Լոռի	80.00%	31.1%	41.1%	7.8%
Կոտայք	75.10%	29.7%	43.8%	1.6%
Շիրակ	87.60%	41.3%	43.8%	2.5%
Սյունիք	94.60%	24.3%	70.3%	.0%
Վայոց Ձոր	70.00%	40.0%	30.0%	.0%
Տավուշ	73.80%	40.4%	31.6%	1.8%
Երևան	82.20%	35.7%	41.6%	4.9%
Ընդամենը	80.30%	34.5%	40.9%	4.9%

Աղյուսակի տվյալները վկայում են, որ աղքատության տարածվածությունը 51%-ից բարձր են գնահատել բոլոր մարզերի տնային տնտեսությունների երկու երրորդից ավելին, բացառությամբ Արմավիրի (53,1%): Ամենամոռայլ պատկերացումն այդ երևույթի տարածվածության մասին ունեն Սյունիքի, Գեղարքունիքի, Շիրակի և Արարատի մարզերի տնային տնտեսությունները:

Գծապատկեր 17. Ըստ մարզերի աղքատության օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականների համեմատական վերլուծությունը



7.3 Կրթական համակարգում ընդգրկվածների գնահատականները աղքատության մասին: Հանրապետության կրթական համակարգի ընտրությունը՝ որպես աղքատության ուսումնասիրության օբյեկտ, ծանրակշիռ հիմնավորում ունի:

Նախ՝ այս համակարգի աշխատողների աշխատավարձը 1990-1996թթ. ընթացքում ունեցել է հարաբերական նվազման ակնհայտ միտում: Եթե հանրապետության տնտեսությունում ձևավորված աշխատավարձի տարեկան միջին մակարդակն ընդունենք 100, ապա կրթության բնագավառի աշխատողների աշխատավարձը կազմել է. 1990-ին՝ 69, 1993-ին՝ 63, 1995-ին՝ 47, 1996-ին՝ 46, իսկ 1997-ի առաջին կիսամյակում՝ արդեն 39: Արդյունքում, կրթական համակարգում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 1996թ. կազմել է 3941 դրամ, կամ աղքատության պարենային գծի 2/3-ը:

Այս տեսանկյունից արժեքավոր է ուսումնասիրել համակարգի աշխատողների կարծիքն իրենց կենսամակարդակի, տնտեսական վիճակի վերաբերյալ:

Մյուս կողմից, հաշվի առնելով Հայաստանում միջնակարգ կրթության պարտադիր լինելը և, հետևաբար, սոցիալական բոլոր խավերի համար դրա հավասար հասանելիությունը, նպատակահարմար է գտնվել իրենց ընտանիքների կենսամակարդակի վերաբերյալ հարցն ուղղել նաև բարձր դասարանի աշակերտներին: Նկատի ունենալով ընտրանքի մեծությունը, մայրաքաղաքի և բոլոր այլ մարզերի միջնակարգ դպրոցներից 5000-ից ավելի աշակերտների ընդգրկումը հարցման մեջ ներկայացուցչական է :

Իրենց ընտանիքի պատկանելիությունը այս կամ այն սոցիալական խմբերին հարցվածները գնահատել են հետևյալ կերպ (տես աղյուսակ 36):

Աղյուսակ 36. Կրթական համակարգում ընդգրկվածների գնահատականներն իրենց ընտանիքի սոցիալական պատկանելության մասին

	Սոցիալական խմբեր	Դպրոցի տնօրեններ	Դպրոցի ուսուցիչներ	Աշակերտներ	
				8-րդ դասարանցի (14-15 տ.)	10-րդ դասարանցի (16-17 տ.)
1	Հարուստ	5.0	0.6	1.5	0.9
2	Ունևոր	0.0	3.8	13.7	12.0
3	Միջին	66.0	47.8	75.0	75.8
4	Աղքատ	26.0	41.8	9.4	10.8
5	Չքավոր	3.0	6.0	0.4	0.5

Ինչպես վկայում են աղյուսակի տվյալները, հարցվածներն հակված են իրենց ընտանիքները դասել միջին սոցիալական խավին: Բայց եթե դպրոցի տնօրենների 5%-ն, այնուամենայնիվ, գտնում է, որ հարուստ ընտանիքներից է, ապա ուսուցիչներն ու աշակերտներն ավելի զուսպ են իրենց ընտանիքներն այդպես գնահատելուց՝ ընդհանուր առմամբ 0,6-1,5%:

Աղքատ և չքավոր գնահատականը ավելի հաճախ տվել են ուսուցիչները՝ 47,8%, այն դեպքում, երբ իրենց ընտանիքներն այդ խավերին են դասել տնօրենների միայն 29,2%-ը և աշակերտների՝ 10-11%-ը:

Եթե զուգահեռներ տարվեն սոցիալական խմբերի և տնտեսական վիճակի տարբերակումների միջև, ապա ամենայն հավանականությամբ կարելի է կառուցել ստորև բերված աղյուսակը, ուր տնային տնտեսությունների պատասխանները համեմատելի են կրթական համակարգի աշխատողների գնահատականների հետ:

Աղյուսակ 37. Ընտանիքների տնտեսական վիճակի և սոցիալական կառուցվածքի համեմատական վերլուծությունը

Տնային տնտեսությունների (տ/տ) գնահատականները՝ իրենց տնտեսական վիճակի մասին	Միջնակարգ դպրոցների աշխատողների գնահատականները՝ իրենց ընտանիքի սոցիալական պատկանելության մասին			
		գնահատականները	տ/տ բաժինը (%-ը)	ուսուցիչներ բաժինը (%)
զատ լավ	0.3	հարուստ	5.0	0.6
լավ	2.0	ունևոր	0.0	3.8
նորմալ	20.9	միջին	66.0	47.8
ոչ շատ լավ	41.0	աղքատ	26.0	41.8
վատ	35.8	չքավոր	3.0	6.0

Բերված թվերը թույլ են տալիս ենթադրել, որ հարցվողների կարծիքը հասարակության սոցիալական կառուցվածքի վերաբերյալ ձևավորվում է ընտանիքների “ոչ շատ լավ” և “վատ” տնտեսական վիճակի գերակշռության պայմաններում: Հետևաբար, սոցիալական միջին խավը ձևավորվում է ավելի շուտ աղքատներից և չքավորներից, քան հարուստ-ունևորներից: Փաստորեն դրանք “ծայրը ծայրին” հասցնող, իրենց գնահատականով “ոչ շատ լավ” կամ “նորմալ” տնտեսական վիճակ ունեցող ընտանիքներն են:

Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների կոնտինգենտի և մանկապարտեզների տնօրենների գնահատականները համահունչ են վերը շարադրվածի հետ, ուստի դրանց վերաբերյալ ամփոփ տվյալները բերվել են միայն գեկույցի հավելվածներում: